ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

Պաջը-Ավիամիտ ԽՍՀՄ-ի խաղաղ
աշխատանքի յուր պաշտպանության
հանձնառանն է

ԻՆՉ ՊԻՏԻ ԻՄԱՆԱ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՀԱԿՈԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (ՀՈՊ)

ՀՍԽՀ ՊԱՋԸ-ԱՎԻԱԲԻՄԻ ԿԵՆՏՐՈՒՄԻ

623
Ի-24

17 JUL 2013

13203

04 AUG 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

623
Ш-24

Պաչը-Ավիաֆիմը ԽՍՀՄ-ի խաղաղ աշխատանքի ու պաշտպանության հենարանն է

ՊԱՉԸ-ԱՎԻԱՖԻՄԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ:
ՀԱԿՈԴԱՅԻՆ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՇՏԱԲ

1010
42783

ԻՆՉ ՊԻՏԻ ԻՄԱՆԱ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՀԱԿՈԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (ՀՈՊ)

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ ԶԵԿՈՒՅՑՈՂՆԵՐԻՆ ՅԵՎ ԶՐՈՒՅՑԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թարգ. Պ. Արայան

ՀՍԽՀ ՊԱՉԸ-ԱՎԻԱՖԻՄԻ ԿԵՆՏԽՈՐՀՈՒՐԴ

ՅԵՐԵՎԱՆ 1932

Ժողովածուի կազմելուն մասնակցել են հետևյալ ընկերները. Բոլտին, Վոյցեխովսկի, Գլադիշև, Գրինբլատ, Գուսարով, Կուզնեցով, Ոստրովսկի, Խամիլիս և Շմերկովիչ։

Ժողովածուի ընդհանուր խմբագրությունը պատկանում է ընկ. Բոլտինին։

Թարգմանեց ռուսերենից Գ. ԱԹԱՅԱՆ։

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Գլավլիտ 7004 (ր) Պատվեր 6413 Տիրաժ 10000

ՀԱԿՈԴԱՅԻՆ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՇՏԱԲԻՑ

Գատերագրի անընդհատ աճող սպառնալիքը և Խորհրդային Միության պաշտպանության խնդիրները, խորհրդային հասարակայնության և ԽՍՀՄ-ի բոլոր աշխատավորների առաջ լուրջ խնդիր են դնում՝ ռազ-քիմիական հարձակումներից պաշտպանության պատրաստվելու գործում լայնորեն ընդգրկել բնակչություն։ Այդ պատրաստության պարտադիր և առաջին պայմանն է՝ ամենից առաջ վերացնել հակոդային տարրական անգրագիտությունը։

Մեթոդական մշակումների այս ժողովածուն, հրատարակված է իրրև ձեռնարկ Լենինգրադի ու դրա մարզի աշխատավորների հակոդային անգրագիտության վերացման միամսյակն *անցկացնելու համար, որ տեղի է ունեցել 1931 թ. մայիսի 25-ից մինչև հունիսի 25-ը։*

Միամսյակն անցկացնելու համար տեղերում կազմակերպված շտաբների և հեղյակների առաջ մարտական խնդիր է դրված եղել՝ մի ամսվա ընթացքում ընդգրկել ամբողջ աշխատավոր բնակչությունը հակոդային ուսուցմամբ։ Այդ խնդիրը կարելի է լուծել միմիայն լայնորոշ կազմակերպության պայմանով։ Պետք է կազմակերպել բոլոր ցեխերում, հիմնարկներում, մանր ձեռնարկներում, բնակվարձկոոպներում և այլն 40-50-ական հոգուց բաղկացած խմբակներ, որոշ պատասխանատու դեկավարներ ամրացնել նրանց, ապահովել հրահանգչությամբ, ձեռնարկներով, ինքով և աշխատել բոլոր պարապմունքներն անցկացնել խմբակների անփոփոխ կազմի հետ։

Պարապմունքները պետք է անպայման անցկացվեն աշխատանքից հետո, (վոչ մի դեպքում ճաշի համար ընդհատման ժամանակ)։ Պարապմունքից առաջ բոլոր ցեխերում, փոխերում, հիմնարկներում, բնակվարձկոոպներում պետք է անցկացնել կարճատև թռուցիկ միտինգներ, աշխատավորների հակոդային ուսուցման նշանակությունն ու կարևորությունը լուսաբանելու համար։

Լենինի քաղաքի ամեն մի աշխատավոր, ևս առավել ամեն մի բանվոր, պետք է հասկանա, որ հակոդային անգրագիտության վերացումը նրա դասակարգային պարտականությունն է սոցիա-

լիստական հայրենիքի հանդեպ, վորովհետև միմիայն ամբողջ բնակչության ընդհանուր իրազեկությունը՝ մեղ ապառնացող ոդային հարձակման միջոցների մասին, ոդից վրատալու ժամանակ պաշտպանության միջոցների և դրանց կիրառման մասին կարող են ապահովել խորհրդային թիկունքի անընդհատ և արդյունավետ աշխատանքը պատերազմի ժամանակ։

Հարվածային բանվորները պետք է լինեն համատարած հակոդային դրաղիտության մարտիկների առաջին շարքերում։ Պետք է ծավալել ցեխերի, դործարանների, ֆաբրիկների, բնակվարձկոոպների սոցիալիստական մրցակցությունը միամսյակն ավելի լավ և լիակատար անցկացնելու համար։

Առաջադրվող դրույցներով բնակչության ընդդրկումը կարող է ապահովել միայն հակոդային պաշտպանության հիմնական հարցերի ըմբռնումը։ Ուստի մեր խնդիրն է՝ միամսյակի ընթացքում բնակչության կողմից ստացած դիտելիքների հետագա կատարելագործումն ու խորացումը։

Հակոդային անդրադիտության վերացման մարզչտաբի
նախագահ՝ ԵԶԵՐԴԱԻԼ

Մարզչտաբի քարտուղար՝ ՄԻՏՐՅԱՍՈՎ

17 մայիսի 1931 թ.

Լենինգրադ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ.

Այս ժողովածուի վեց մեթոդական մշակումները շաղկապված են իրար հետ իրենց բովանդակությամբ։ Առաջինը նվիրված է պատերազմի վտանգի և անխուսափելիության, նրա բնույթի և թիկունքի հակոդային պաշտպանության նշանակության հարցին։ Երկրորդն ընդդրկում է ոդա-քիմիական հարձակման միջոցների, և, առավելապես, ակտիվ հակոդային պաշտպանության հարցերը։ Երրորդը խոսում է անհատական քիմպաշտպանության միջոցների մասին։ Չորրորդն ընդդրկում է պասսիվ ՀՈԳ-ի (հակոդային պաշտպանության) և հարձակումների ժամանակ բնակչության պարտականությունների հարցերը։ Վերջապես, հինգերորդն ու վեցերորդն ընդդրկում են ոդա-քիմիական հարձակումից վնասված մարդկանց ու կենդանիների և բժշկական և անասնաբուժական առաջին ոգնության հարցերը։

Այսպիսով, այդ դրույցները տալիս են տարրական դիտելիքների մի ավարտած շրջան, վորն անհրաժեշտ է քաղաքացուն ՀՈԳ և պաշտպանության միջոցների հետ ընդհանուր ծանոթություն ունենալու համար։ Առաջին հինգ դրույցը պետք է անցկացնել անպայման, վորովհետև դրանցից վորևե մեկի հանումը նկատելի ճեղքվածք կստեղծի ունկնդիրների պատրաստության գործում։ Վեցերորդ դրույցը (կենդանիների պաշտպանությունը) նշանակված է սովխոզների, ֆերմաների և ձիաքարշ տրանսպորտի բանվորների համար, նույնպես և բնակչության այն խավերի համար, վորոնք տնային կենդանիներ ունեն կամ կապված են դյուղատնտեսության հետ։

Դրա հետ միասին ժամանակի սուղությունը և հարցերի մեծ ծավալը հարկադրում են յուրաքանչյուր դրույցում միանդամայն խուսափել կրկնություններից։ Այդ անհրաժեշտ է հաշվի առնել հատկապես այն դեպքում, յեթե պարապմունքները տարվում են զանազան անձնավորությունների կողմից, այս կամ այն մասնագետներին հրավիրելով։ Այդ դեպքում անհրաժեշտ է նախապես հրահանդչական ցուցումներ տալ նրանց, մատնանշելով, թե ինչ հարցեր են արդեն լուսաբանված նախորդ դրույցներում։

Յուրաքանչյուր դրույց հաշված է 45 րոպե.—1 ժամ։ Այդ ժամանակը չատ սահմանափակ է, և այն նյութի ծավալը, վոր առաջարկվում է վորոշ մշակումների համար, պարզորեն մեծ է այդ ժամանակի համար։ Պարզ է, վոր պարապմունքն անցկացնողը յուրաքանչյուր կոնսպեկտից պետք է ընտրի հիմնականը տվյալ յուա-

բանք համար և կանգ առնի, առավելապես, դրա վրա: Որինակ, արտադրական ձեռնարկությունում չորրորդ թեմայի մասին պարապմունքներ անցկացնելիս, բնակվարձկոոպերի և թաղային խմբերի կազմակերպման հարցերի վրա կարելի է կանգ առնել միայն հարևանցի կերպով. կամ, վեցերորդ թեմայի մասին զրույց անցկացնելիս այն քաղաքացիների հետ, որոնք իրրև անհատներ կենդանիներ ունեն, կարելի է բոլորովին բաց թողնել կենդանիների մասսայական պաշտպանության հատվածը և այլն:

Ժամանակի կարճատևությունը և հարցերի բարդությունը հարկադրում են պահանջել պարապմունքների մաքսիմալ պարզություն: Անհրաժեշտ է պարապմունքներն ապահովել առնվազն հետևյալ ուսումնական դիտողական պիտույքներով:

Առաջին թեմայի համար. 1. ԽՍՀՄ-ի քարտեզը, ցույց տալով այն շերտերը, որոնք գտնվում են ոգային հարձակումների ոլորտների տակ:

Յերկրորդ թեմայի համար. 1. Պլակատ ժամանակակից ինքնաթիռների տիպարների նկարներով:

2. Ավիառումբերի մոդելի պլակատ, դրանց կտրվածքով:

3. Պլակատ զենիթային հրանոթի նկարով:

4. ՄԹՆ (մարտական թունավորող նյութերի) հալաքածու (հոտերի և գույների նմանություն—իմիտացիա):

Յերրորդ թեմայի համար. 1. Հակագազեր ГТ-3 և, եթե հնարավոր է, ՊՏՇ:

2. Նույն հակագազերն իրեն կտրվածքով կամ պլակատներ դրանց կտրվածքի նկարով:

3. Պաշտպանական հագուստի նմուշը կամ մոդելը (կամ դրա պլակատային նկարը):

Չորրորդ թեմայի համար. 1. Պլակատներ ՀՈՊ մասերի մարտական աշխատանքի նկարներով:

2. Հրահանգ՝ ոգային հարձակման ժամանակ բնակչության պարտականությունների մասին (հրահանգը պետք է անպայմանորեն բաժանել չարանին):

Հինգերորդ թեմայի համար. 1. Պլակատներ կամ մուլյաժներ, որոնք ցույց են տալիս ՄԹՆ ներգործությունն որդանիզմի վրա:

2. Պլակատներ առաջին ոգնության մասին (որինակ՝ Բերլյանդի—«Առաջին Ոգնություն», Բուրդենկոյի խմբագրությամբ—1929 թ., հատկապես №№ 20, 21, 22 և 23):

Վեցերորդ թեմայի համար. 1. Պլակատներ, որոնք ցույց են տալիս ՄԹՆ ներգործությունը կենդանիների վրա:

2. Ձիու հակագազի նմուշները կամ նրանց նկարների պլակատ:

Պլակատների և իրերի այդ մինիմալ քանակը, եթե հնարավոր լինի, կարելի է բավականին մեծացնել:

Սմենից շատ ցանկալի է պարապմունքներն անցկացնել հատկապես կահավորած ՀՈՊ անկյունում, որտեղ այդ բոլոր ատրկանները ձեռքի տակ լինեն:

Եթե վերոհիշյալ պլակատները բացակայում են, անհրաժեշտ է զրույցի համապատասխան տեղերում ունկընդիրներին ցույց տալ զոնե գրքերի նկարները:

Հարցերի ավելի խորը մշակման համար կարելի է հանձնարարել հետևյալ հիմնական գրականությունը (ռուսերեն լեզվով):

1. Ընկ. Կաշենի զեկուցումը ԿԻԳԿ XI պլենումում և այդ զեկուցման առթիվ վորոշումը:

2. Լեռնարդով—Ինչով է սպառնում ավիացիան և քիմիան քաղաքացիական բնակչությանը և ինչպես դրանցից պաշտպանվել: Հրատ. Ռուսպետհրատի 1930 թ.:

[redacted]:

4. Ռոգով—Մարտական ՄԹ տոքսիկոլոգիան (Հրատ. ՀՈՊ Համամիութենական կուրսերի—1931 թ.):

5. Սավելյեվ—Առաջին ոգնություն ոգա-քիմիական հարձակումների ժամանակ վնասվածներին: Հրատ. ՊԱՋԸ-Ավիաք. 1929 թ. (հրատարակված և հայերեն լեզվով) (կամ Բերլյանդ—Առաջին ոգնություն):

6. Կոնոնոկ—Կենդանիների պաշտպանությունը ԹՆ-ից—Գեոգ. Թագմ. Հրատ. 1931 թ.:

Զրուցավար—դեկավարներն իրենց պատրաստության համար կարող են ոգտվել նաև ավելի կապիտալ աշխատություններից (որինակ, Ֆիշման—Ռազմա-քիմիական գործ և այլն):

Զրույցների ընթացքում ստացած գիտելիքների ամրապնդման նպատակով, նույնպես և դեպի այդ գիտելիքները հետաքրքրություն զարգացնելու համար, ցանկալի է, զրույցների հետ զուգընթաց կազմակերպել հակագազերը հագած մարզանքներ, կամերային ծիսում, ավիացիայի և քիմիայի ՀՈՊ թանգարանի կաբինետի եքսկուրսիա և այլն:

Անհրաժեշտ է հիշել, որ դեպի քննության առնվող հարցերը յուրացած հետաքրքրությունը և ունկընդիրների ակտիվությունը ապահովված կլինեն միմիայն այն ժամանակ, եթե նրանք անպայման յուրացնեն ապագա պատերազմի դասակարգային բնույթը և կուսակցության քաղաքականությունը ԽՍՀՄ պաշտպանության գործում: Ուստի բոլոր զրույցներն անցկացնելիս, դրանք պետք է հագեցված լինեն քաղաքական բովանդակությամբ և կապակցված լինեն ընթացիկ քաղաքական անցքերով, որոնք պարզորոշ ցույց են տալիս ԽՍՀՄ վրա իմպերիալիստների դիմած հարձակման վտանգի սրությունը:

ԶՐՈՒՅՑ ԱՌԱՋԻՆ

Պատերազմի վտանգը և աշխատավորների անելիքները հակոդային պաշտպանության գործում:

Զրույցի նպատակը

1. *Բացատրել ԿԻԳԿ XI պլենումի վորոշումները՝ «Պաղեստինի վտանգը և կոմունիստների անելիքները» զեկուցման առթիվ*).

2. *Աչխատել, վոր ունկընդիրները հասկանան ՀՈՊ կազմակերպության կարևորությունը և աշխատավորների դերը ՀՈՊ գործում:*

Զրույցի պլանը

1. *Ինչպես գնահատեց ԿԻԳԿ XI պլենումը ժամանակակից միջազգային դրությունը և կապիտալիստական աշխարհի ու ԽՍՀՄ-ի փոխհարաբերությունը:*

2. *Ինչպես են պատրաստվում կապիտալիստները ԽՍՀՄ-ի դեմ ապագա պատերազմի համար:*

3. *Ժամանակակից ռազմական տեխնիկայի զարգացումը և նրա ազդեցությունը ապագա պատերազմի բնույթի վրա:*

4. *ՀՈՊ նշանակությունը և աշխատավորների լայն մասսաների մասնակցության անհրաժեշտությունը ՀՈՊ կազմակերպության գործում:*

5. *Աչխատավորների անելիքները ՀՈՊ մեջ:*

Կոնսպեկտ.

1. *Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործկոմի XI պլենումը, վոր տեղի ունեցավ ս. թ. ապրիլի սկզբին, լսեց ընկ. Կաշենի զեկուցումը—«ԽՍՀՄ դեմ ռազմական ինտերվենցիայի սպառնալիքի ուժեղացման և կոմունիստների անելիքների մասին»: Այդ հարցը ԿԻԳԿ-ում դնելը հետևանք է այն բանի, վոր «ԽՍՀՄ-ի դեմ ռազմական ինտերվենցիայի վտանգն ամբողջ համաշխարհային պրոլետարիատի համար անմիջական վտանգ է դարձել» (ԿԻԳԿ վորոշումից):*

Համաշխարհային բուրժուազիան ԽՍՀՄ-ի դեմ պայքարում ներկայացավ անցնում է «Դրսից հարձակվելու տակտիկային՝ տնտեսական շրջափակ պաշարման և ռազմական ինտերվենցիայի միջոցով» (ԿԻԳԿ վորոշումից):

Համաշխարհային բուրժուազիային հարկադրում է ԽՍՀՄ-ի դեմ պայքարում տակտիկայի այդ փոփոխությունը մտցնելու դասակարգային պայքարի սրումը կապիտալիստական յերկրներում, բուրժուազիայի ձգտումը դուրս գալ ճգնաժամից ԽՍՀՄ-ի հաշվին, վախը հաղթանակող սոցիալիզմի հանդեպ, այն տակտիկայի խորտակումը, վորը նկատի յեր առնում ԽՍՀՄ-ի կապիտալիստական վերաբերումն ու մեռնող հակահեղափոխական դասակարգերի ոգնությունը (կուլակությունը, քաղաքային նեպմանական բուրժուազիան) (ԿԻԳԿ վորոշումից):

Այսպիսով, ԽՍՀՄ-ի և կապիտալիստական յերկրների միջև փոխհարաբերությունների սրումը՝ դա յերկու սկզբունքորեն հակառակ կապիտալիզմի և սոցիալիզմի պայքարն է (ԿԻԳԿ):

Այդ պայքարը չի վերացնում իմպերիալիստների միջև յեղած հակասությունները: Ընդհակառակը, «Համաշխարհային դարգացող տնտեսական ճգնաժամը՝, վաճառահանության շուկաների համար իմպերիալիստական պետությունների կողմից մղվող պայքարի պատճառով, սաստկացնում է բոլոր իմպերիալիստական հակասությունները, որանց հատկապես սուր բնույթ տալով: Մեծանում է իմպերիալիստական պետությունների միջև ռազմական ընդհարումների վտանգը» (ԿԻԳԿ վորոշումից):

Բայց և այնպես հիմնական և ամենագլխավոր հակասությունները համաշխարհային մրցարանում ներկա մոմենտում հանդիսանում են այն հակասությունները, վոր գոյություն ունեն ԽՍՀՄ-ի և կապիտալիստական աշխարհի միջև: «Իմպերիալիստների միջև յեղած հակասությունների աճումը չի թուլացնում, այլ ընդհակառակը՝ ուժեղացնում է ԽՍՀՄ-ի դեմ ինտերվենցիոն պատերազմի վտանգը» (ԿԻԳԿ վորոշումից):

2. ԽՍՀՄ-ի և կապիտալիստական յերկրների միջև հակասությունների սրումը գտնում է իր արտահայտությունը ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի կատաղի պատրաստության մեջ:

Գործի յեն դրված բոլոր միջոցներն ու ուժերը ԽՍՀՄ-ի դեմ ինտերվենցիա պատրաստելու համար:

Ֆրանսիան ԽՍՀՄ-ի դեմ ինտերվենցիա պատրաստելու գործում առաջավոր դերն է խաղում. և այդ պատահականություն չէ: Ֆրանսիայի նախապատերազմյան պարտապանների միջև ցարական Ռուսաստանը յեղել է առաջին տեղում: (1914–18 թ. պատերազմից առաջ Ֆրանսիան արտասահմանում ունեցել է 45 միլիարդ ֆրանկ կապիտալներ, իսկ Ռուսաստանում 11,3 միլիարդ ֆրանկ, այսինքն 25%): Ֆրանսիան ցարական Ռուսաստանում իրեն տեր է զգացել, դուրս հանելով հարյուրավոր միլիոններ շահույթ և ցարական Ռուսաստանի վրին փոթաթելով իր քաղաքականությունը: Ֆրանսիան փորձում է նորից ստեղծել «Ռուսաստանը», վորը հլու հնազանդ լիներ Ֆրանսիային և նրա կապիտալների գործողության տեղ ներկայացներ: Ֆրանսիայի մտադրությունները Պան-Յեվրոպայի ստեղծման մասին ուղղված են՝ մի կողմից—Ֆրանսիայի դեկավար դերը ամրապնդելուն Յեվրոպայի գործերում, մյուս կողմից—յեվրոպական պետությունների բլոկ ստեղծելուն հակախորհրդային պատերազմի համար:

ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ կազմակերպելու համար Ֆրանսիան ընտրել է իր համար հավատարիմ ոգնականներ, հանձինս Լեհաս-

*) *Տվյալ թեմայի համար իրրև նյութ կարելի յե ոգտագործել, բացի ԿԻԳԿ XI պլենումի նյութերից, նաև ընկ. Վորոշիլովի զեկուցումը Համլկեմ IX համագումարում:*

ասանի և Ռումինիայի։ Թե Լեհաստանը և թե Ռումինիան կապված են Ֆրանսիայի հետ ռազմական դաշնագրով։ Լեհաստանն ու Ռումինիան իրենց հերթին կապված են իրար հետ ռազմական դաշնագրով, վորն ուղղված է բացառապես ԽՍՀՄ-ի դեմ։

Ֆրանսիան ուժեղ կերպով ֆինանսավորում է Լեհաստանի և Ռումինիայի ռազմական արդյունաբերությունը։ Ֆրանսիան հոդ է տանում Ձեխո-Սլովակիայի ռազմական արդյունաբերության զարգացման մասին, վորը, Ֆրանսիական պլանների համաձայն, պետք է ապահովի Լեհաստանի և Ռումինիայի հայթայթումը ռազմական հանդերձանքով և մարտամթերքով։

Գաղտնիություն չէ, վոր վերջին տարիների ընթացքում Ֆրանսական գեներալների «վիզիտները» (այցելությունները) Լեհաստան ու Ռումինիա հաճախակի են դարձել։ Այդ «վիզիտները» սեռական այցելություններ են Ֆրանսական ընդհանուր շտաբի գեներալների կողմից, վորոնք ղեկավարում են Լեհաստանի և Ռումինիայի պատրաստությունը ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի համար։

«Արդկուսակցության» և մենշևիկների կենտկոմի միությունական բյուրոյի գաղտավարությունը պարզեց վոչ միայն ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի վտանգի իրականությունը, այլ և Խորհրդային Միության դեմ ինտերվենցիայի կոնկրետ պլանը։ Ֆրանսական ընդհանուր շտաբի գիկավարությամբ տեղի է ունեցել սիստեմատիկ պատրաստություն, ինտերվենցիան իրագործելու համար։ Չին-արևելյան յերկաթուղու վրա հարձակումն այդ պլանի եղեգաշնորհներից մեկն է յեղել։ ԽՍՀՄ-ի ներսում միացվել էին բոլոր հակահեղափոխական ուժերը՝ մոնարխիստներից (միապետականներից), կադետներից մինչև մենշևիկները, վորպեսզի վնասարարության, լրտեսության և այլի միջոցով ապահովեն ինտերվենցիայի հաջողությունը։ Նույնիսկ Համկ(բ)Կ աջ ոպորտունիստական ոպոզիցիան ել է մտել ինտերվենցիայի պլանի մեջ։ Ինտերվենցիայի կատարողները հաշվի էին առել աջ ոպորտունիստների քաղաքականությունն իրրև ոգնություն իրենց պլանների իրագործման համար։ Ինտերվենցիայի պլանը հաշված է յեղել, Ֆրանսական ընդհանուր շտաբի պլանի համաձայն։ Մշակված է յեղել նաև ինտերվենցիայի ոպերատիվ կողմը, նշանակված է յեղել ինտերվենցիայի միացյալ ուժերի գլխավոր հրամատարը՝—Ֆրանսական գեներալ Գուրուն։ Բանակի հայթայթման համար ինտերվենտների կողմից ստեղծված է յեղել հատուկ կազմակերպություն Լեգեոն-ի գլխավորությամբ (նախկին դաշնակիցների բանակների հայթայթման պետը իմպերիալիստական պատերազմի ընթացքում), վորը գնել է կես միլիարդ դոլլարի պաշարներ, ԽՍՀՄ-ի դեմ ինտերվենցիան բանակների կարիքների համար։

Անվերջ մղվող կամպանիան «Խորհրդային դեմպինգի» մասին, «հարկադրական աշխատանքի» մասին, ագրարային և այլ կոնֆլիկտները, այդ ամենը ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի պատրաստության քաղաքական մասն է։ «Արդեն կազմակերպված է անհետաքրքիր պատերազմը ԽՍՀՄ-ի դեմ» (ԿԻԳԿ)։ Բուրժուազիան ոգտագործում է բոլոր միջոցները, վորպեսզի վնասի Խորհրդային Միությանը, վոչնչացնի սոցիալիստական շինարարության հաջողությունը։

3. Խորհրդային Միությունը չի նահանջում խաղաղության իր քաղաքականությունից։ Այդ նորից հաստատեց Խորհուրդների VI համամիութենական համագումարը։ Չնայած ամեն տեսակի պրովոկացիաներին, վորոնք ուղղված են մեզ հետ գործություն ունեցող նորմալ առևտրական կապերը խզելու համար, ԽՍՀՄ, վորը զբաղված է սոցիալիստական շինարարությամբ, կպաշտպանի խաղաղությունը։

ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի համար իմպերիալիստների կատաղի պատրաստության հանդեպ՝

«Աճում է կապիտալիստական և գաղութային յերկրների պրոլետարական մասսաների պատրաստակամությունը ԽՍՀՄ-ում պրոլետարական դիկտատուրան պաշտպանելու համար» (ԿԻԳԿ)։

Այդ պայմաններում ԽՍՀՄ-ի դեմ պատերազմը

«Գլխավոր վտանգն է նրանց համար, ովքեր կհամարձակվեն խախտել խաղաղությունը և հարձակվել Խորհրդային Միության վրա» (Խորհուրդների VI համագումարը)։

Ինտերվենցիայի ուժեղացած սպառնալիքն իր ամբողջ լրջությամբ խնդիր է դնում ԽՍՀՄ աշխատավորության առաջ՝ միշտ աչալուրջ լինել և անդուլ ամրացնել Խորհրդային Միության պաշտպանությունը։

Բոլոր աշխատավորների ամենորյա խնդիրը պիտի լինի Կալմիր բանակի գլխավոր՝ ընկ. Վորոշիլովի դիմումի կատարածությունը, վորը Կոմյերիմիության IX համագումարում ասաց.

«Պետության պաշտպանության հարցերն ամբողջ վիթխարի մեր պատմական աշխատանքում ամենակարևոր հանդուցային հարցերն են։ Ծանրաբեռնված լինելով մինչև վերջը ամենորյա հոգսերով, կանկրետ կերպով պատերազմ չտեսնելով, վորի մասին մենք խոսում ենք 10 տարվա ընթացքում, մենք շատ հաճախ ստիպվում ենք միայն պաշտպանության մասին խոսակցություններով և այն ել հանդիսավոր դեպքերում»։

Ապագա պատերազմը կպահանջի մեր յերկրի բոլոր ուժերի հսկայական լարում։

Իսկական և հուսալի պաշտպանությունը ներկա պայմաններում պահանջում է ժողովրդական տնտեսության, հատկապես արդյունաբերության բարձր զարգացում, վորը կարողանա բանակին տալ պատերազմի համար բոլոր անհրաժեշտ միջոցները։ Արդյունաբերության բնագավառում հնգամյակի կատարումն ստեղծում է տեխնիկական, վառելանյութի, քիմիական բազա Խորհրդային Միության պաշտպանության համար։ Գյուղատնտեսության կոլեկտիվացման բնագավառում հնգամյակի կատարումն ստեղծում է պաշտպանության համար պարենավորման և հումքի հզոր բազա։

Միաժամանակ բանվոր դասակարգի աճումը, կուլտուրական վերացումը, աշխատավորների նյութական-կենցաղային դրության բարելավումն ստեղծում է պաշտպանության համար ամուր քաղաքական բազա: Ուստի, վորքան ավելի հաջող, վորքան ավելի չուտ, վորքան ավելի լայն իրագործվում է հնգամյակը, այնքան ավելի պաշտպանունակ է դառնում մեր յերկիրը: Յուրաքանչյուր աշխատավոր, նոր ինտերվենցիայի սպառնալիքը նկատի ունենալով, պետք է հարվածային աշխատանքով ապահովի արդյունաբերության և գյուղատնտեսության կոլեկտիվացման զարգացման մեր պլանների կատարումը:

4. Բայց դրանով չեն սպառվում մեր յերկրի պաշտպանության ամրացման խնդիրները:

Ապագա պատերազմը «մեքենաների պատերազմ» է: Դա պահանջում է բարձր մարտական ուսուցում վոչ միայն կարմիր բանակից, այլև աշխատավորության լայն մասսաների ուժեղացրած պատրաստություն ռազմական տեսակետից:

Արդեն հիմա, խաղաղ ժամանակ, բոլոր բանակների հագեցումը նոր տեխնիկական միջոցներով հասել է բարձր մակարդակի:

Նոր տեխնիկայի արմատացումը հիմնական փոփոխություն է մտցնում թե բանակի կառուցվածքի մեջ և թե նրա գործողությունների բնույթի մեջ, համեմատելով այն բանի հետ, ինչ վոր դեպքություն է ունեցել բանակներում 1914—1918 թ. թ. պատերազմի ժամանակ: Աճում են տեխնիկական զորքերը: Խիստ փոփոխվում են նրանց սպառազինման բնույթը: Բարձրանում է ժամանակակից գենքի հեռահարությունն ու արագաձգությունը, մեծանում է նաև հենց սպառազինման միջոցների քանակը:

Ահագին զարգացում ունի ավիացիան: Արդեն համաշխարհային պատերազմի ընթացքում ավիացիան խոշոր չափով զարգացել է (որինակ), պատերազմի ժամանակ ինքնաթիռներ են կառուցվել՝ Ֆրանսիայում՝ 50·000, Գերմանիայում՝ 45·000, Անգլիայում՝ 55·000): Իսկ պատերազմից հետո տարիների ընթացքում ավիացիան շատ առաջ է անցել:

Ինքնաթիռների քանակի աճման մասին վորոշ հասկացողություն են տալիս հետևյալ տվյալները՝ մարտական ինքնաթիռների թիվը (չարքում) Անգլիայում, ՀԱՄՆ և Ֆրանսիայում.

1923 թվին	—	2200
1928 թվին	—	2900
1930 թվին	—	5200

Մարտական ինքնաթիռների թիվը (չարքում) Լեհաստանում և ԽՍՀՄ-ի արևմտյան այլ հարևանների մոտ.

1923 թվին	—	260
1928 թվին	—	640

Ավիացիայում կապիտալիստական յերկրները հիմնական ուշադրություն դարձնում են ռմբակոծող ավիացիայի զարգացմանը, վորն առանձին յերկրներում ամբողջ ավիացիայի կազմի 50 %-ից ավելի է:

Ավիացիայի քանակական աճման ինչպիսի հնարավորություններ կան ներկայումս, յերևում է հետևյալից. համաշխարհային պատերազմի ժամանակ ինքնաթիռների կառուցումը (թվերը տես վերևում) տեղի յեն ունեցել հինգ յերկրներում (Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում, ՀԱՄՆ և Անգլիայում) գոյություն ունեցող 8–10 ինքնաթիռաշինարարական և 8 մոտորաշինարարական գործարաններ 3·000 բանվորներով:

1925 թ. տվյալներով, այդ նույն յերկրում գոյություն են ունեցել 75 ինքնաթիռաշինարարական և 34 մոտորաշինարարական գործարաններ 100·000 բանվորներով:

Նույնչափ մեծ զարգացում է ստացել նաև ավիացիայի վորակը: Արագության զարգացումը, թռիչքի տեվողությունն առանց իջնելու, մոտորների հզորությունը խոշոր չափով մեծացնում է թռիչքների հեռավորությունը: Ներկայումս սասնյակ հազար կիլոմետր հեռավորությամբ թռիչքները (հասկանալի յե, առանց գնդ առնելու) սովորական յերևույթ են դարձել: Այժմ արտասահմանում ուժեղ կերպով աշխատում են լուծելու ինքնաթիռները դյուրավառ նյութերով մատակարարելու հնարավորությունը՝ ոդում՝ առանց գետնին իջնելու:

Բեռնունակության մեծացումը հնարավորություն է տալիս ոդով փոխադրություններ կատարել նույնիսկ առանձին զորական միավորությունների՝ հրետանու և ավտոմոբիլների հետ միասին հակառակորդի խորը թիկունքը:

Վերջապես, խոշոր զարգացում են ստանում կռվի քիմիական միջոցները: Թեպետ կարեվորագույն պետությունների գոյություն ունեցող հատուկ պայմանագրով քիմիական պատերազմն «արգելված է», սակայն բոլոր կապիտալիստական յերկրներում ապագա կռիվների համար քիմիական միջոցների ուժեղ պատրաստություն են տեսնում: Բուրժուազիան այս բոպելիս թունավորող նյութեր և գործադրում իրեն յերկրների բանվորների դեմ պայքար մղելիս:

1918 թվի հոկտեմբերին Համբուրգում բանվորական ցույցերը ցրվում եյին քիմիական նռնակներով: Հիմա բանվորների և վոստիկանության միջև դրեթե վոչ մի ընդհարում չի յինում, վորի ընթացքում վոստիկանությունը չգործադրի այդ գենքը:

Լայնորեն ոգտագործվում են ոդային ուժերը գաղութային յերկիրներում հեղափոխական շարժման դեմ պայքարում, որինակ՝ 180 անգլիական ինքնաթիռները 1930 թվի հունիսին 2 որվա ընթացքում ձգել են մինչև 5·000 ռումբ անպաշտպան հնդկական գյուղերի վրա: Կասկածից դուրս է, վոր ապագա պատերազմում, ԽՍՀՄ դեմ պատերազմում, կապիտալիստական յերկրները կոգտագործեն քիմիական միջոցները: Այդ բղխում է կապիտալիստների կողմից ԽՍՀՄ-ի դեմ մղվելիք պատերազմի դասակարգային բնույթից:

Պատերազմի հիմնական տեխնիկական միջոցների վերոհիշյալ

համատարած տեղաբաշխումը ցույց է տալիս, թե վերջին հանգամանքը փոխվում է ապագա պատերազմի բնույթը:

Բացի քանակը իրեն, իր զբաղմունքների փոփոխությունից, ռազմական տեխնիկայի զարգացումը միանգամայն փոխում է «Ֆրոնտ» և «թիկունք» հասկացողությունը: Ապագա պատերազմում դժվար կլինի սահման գծել Ֆրոնտի և թիկունքի միջև: Ապագա պատերազմը անխուսափելիորեն կներգրավի փաստորեն յուրքի ամբողջ բնակչությունը:

Ավիացիայի արդի միջոցների ժամանակ, լիակատար հնարավորություն կա հարվածի տակ դնել և ջնջել հակառակորդի յուրքի կարևորագույն կենսական կենտրոնները: Իսկ թիկունքի աշխատանքի ամեն մի թուլացումը սպառնալիք կլինի պատերազմը հաղող դնելու համար:

Բայց վերջին ել ուժեղ զարգացած ավիացիան, յուրքեք չի կարող մի այնպիսի գրություն լինի, որը հնարավոր չլինի պաշտպանել նրա հարձակումներից: Հարկավոր է միայն նախորդ և լավ հիմունքների վրա դնել ամբողջ բնակչության պատրաստությունը ապագա ողային հարձակումներից պաշտպանվելու համար:

5. Որհրդային Միության պաշտպանությանը պատրաստվելիս, մենք պետք է միանգամայն լիակատար կերպով հաշվի առնենք բնակավայրերի, յուրկաթուղային կայարանների, արդյունաբերական ձեռնարկությունների և այլի վրա ողա-քիմիական միջոցների հարձակման կիրառման սպառնալիքը:

Լենինգրադը, որը սահմանից ընդամենը մի քանի տասնյակ կիլոմետրի վրա յե տեղավորված, հատկապես լիակատար կերպով պետք է պատրաստ լինի հակողային պաշտպանության համար:

Հակողային պաշտպանության համար պատրաստությունը բաղկացած է հետևյալից.

1. ՀՈՊ հատուկ (ակտիվ և պասիվ) միջոցների առկայությունից, որոնց խնդիրն է արգելել հակառակորդի ողային ուժերի հարձակումը, անմիջորեն վոչնչացնելով նրանց, կամ թուլացնել նրա գործողությունների հետևանքը:

2. Ողային հարձակումներից բնակչության լայն մասսաների պաշտպանության պատրաստությունից:

Ողա-քիմիական հարձակումներից մեր ֆաբրիկների և գործարանների աշխատավորների անմիջական պաշտպանության կազմակերպության հիմունքն է՝ ողա-քիմիական զրազիտությունը և լայն մասսաների կազմակերպվածությունը:

Գլխավորն այն է, որ ողա-քիմիական հարձակման պայմաններում յուրաքանչյուր աշխատավոր իմանա, թե նա ինչ պիտի անի, որպեսզի պաշտպանի արտադրությունը, իր ընտանիքը, իրեն՝ ողա-քիմիական հարձակման հետևանքներից:

Մի շարք բուրժուական ռազմական մասնագետներն ընդգծում են ողա-քիմիական հարձակումների համար բնակչության մասսայական պատրաստության հատուկ կարևորությունը:

ՀԱՄՆ ողա-քիմիական ծառայության պետը 1928 թ. Ռազմական Ակադեմիայում իր դեկուցման մեջ ասաց.

«Քաղաքների վրա քիմիական հարձակումը կարևոր նշանակություն չունի, յեթե բնակչության նախորդ պատրաստությամբ վերացված է նրա բարոյալքման հնարավորությունը: Կարելի յե հաջողության հասնել միայն այն դեպքում, յեթե բնակչությունը պատրաստված չե թն-ից պաշտպանվելու համար և յեթե դրություն ունեն չափազանցացրած, կեղծ պատկերացումները դրանց գործողությունների մասին»:

6. Ի՞նչպիսի խնդիրներ են դրվում աշխատավորների առաջ ՀՈՊ գործում:

Առաջին հերթին պետք է կազմակերպված լինեն ՀՈՊ-ի իսկական մարտունակ խմբեր: ՀՈՊ խմբում աշխատանքը պետք է դառնա նրա կազմի մեջ գտնվող բոլոր աշխատավորների պատասխանատու և պատվավոր հեղափոխական պարտականություն: Պետք է ստեղծված լինի ՀՈՊ խմբերի բոլոր մարտիկների հաստատուն, հեղափոխական կարգապահություն և իրենց գործը վերջակի կերպով իմանալը:

Բոլոր աշխատավորների գործն է՝ ապահովել ՀՈՊ խմբերի աշխատանքն այն ուշադրությամբ, որին արժանի յե ԽՍՀՄ պաշտպանության այդ կարևորագույն աղակը:

Միաժամանակ պետք է հասնել բոլոր աշխատավորների ընդհանուր սկզբնական հակողային զրազիտության: Բոլորը պետք է սովորեն, թե ինչպես ողտվել հակագազից, իմանան առաջին ողնության միջոցների մասին, իմանան, թե ինչ պիտի անեն ողային տաղնապի, հարձակման պայմաններում՝ հարձակումից հետո, ինչպես տանը յեղած ժամանակ, այնպես ել արտադրությունում գիշերը և ցերեկը:

Հակողային անզրազիտության վերացման վերաբերյալ անցկացվելիք միամսյակը պետք է Լենինգրադի և նրա մարդի բոլոր աշխատավորներին տա այդ սկզբնական, ամենափոքր անհրաժեշտ գիտելիքները և միևնույն ժամանակ ամրապնդի սոցիալիզմի պաշտպանության կարևորագույն բնագավառի—ՀՈՊ բոլոր աղակները:

ԶՐՈՒՅՑ ՅԵՐԿՐՈՐԴ

Ողոքիմիական հարձակման և պաշտպանության միջոցները:

Զրույցի նպատակը.

1. Ընդհանուր տեղեկություններ տալ ողա-քիմիական հարձակման միջոցների և դրանց կիրառման մասին:

2. Հասկացողություն տալ հակողային պաշտպանության խնդիրների և կազմակերպման մասին:

Զրույցի պլանը.

1. Ինչով է սպառազինված ժամանակակից ավիացիան՝ քաղաքները և թիկունքների գործարանները հարվածելու համար:

2. Ավիառումբեր՝ ֆուգասային, բեկորային, հրձիգ և քիմիական: Դրանց գործողության ու կիրառման սկզբունքները:

3. Ի՞նչ է ԹՆ: ԹՆ ներգործությունը կենդանի օրգանիզմների վրա, կերակրի, ջրի, և զանազան առարկաների վրա:

4. Ի՞նչպես են կիրառվում ԹՆ ավիացիայի կողմից:

5. Ի՞նչպես են պաշտպանվում բնակավայրերը ողային հարձակումներից: ՈՂՊԿ (Ողային պիտողության, պաշտպանության, կապի) պոստերի ծառայությունը և ակտիվ պաշտպանությունը հակաօդանիչ ավիացիա, զենիթային հրետանի և զնդացիրներ:

Կանոպեկտ.

1. Ավիացիան, վորը հարձակում է կատարում թշնամու յերկրի թիկունքները ոմբակոծելու համար, կոչվում է ոմբակոծող ավիացիա: Ժամանակակից ոմբակոծող ինքնաթիռներն ուժված են գործողության մեծ հեռավորությամբ, վորը նրանց հնարավորություն է տալիս թռչել թշնամու յերկրի խորքը մինչև 700 կիլոմետր հեռավորությամբ, և մեծ բեռնունակությամբ, վորը հնարավորություն է տալիս բարձրացնել ռումբերի և հարվածելու այլ միջոցների մեծ պաշարներ: Գոյություն ունեն ինքնաթիռների առանձին տիպեր, վորոնք բարձրացնում են մի քանի հազար կիլոգրամ մարտական բեռ: Ոմբակոծող ինքնաթիռների բեռնունակությունը, վոր գոյություն ունեն ժամանակակից բանակների հիմնական սպառազինման մեջ, տատանվում է 250-ից մինչև 2000 կիլոգրամի:

Ավիացիան զինվում է. ա) զնդացիրներով՝ ողում մարտ մղելու համար և վորոշ դեպքերում վերերկրյա նպատակները գնդակոծելու համար (դրությունից զորքերի դեմ, նույնպես և թիկունքում քիչ պաշտպանված կեսերում մարդկանց կուտակումների գնդացրային գնդակոծում). բ) ռումբերով՝ վերյերկրյա նպատակները հարվածելու համար:

2. Ռումբերը լինում են զանազան գործողության (տիպարի): Նայած մարտական առաջադրություններին, կիրառվում են հետևյալ տիպարները:

ա) Ֆուգասային ռումբեր, վորոնք գործում են գլխավորապես պայթուցիկ ալիքի ուժով: Ռումբի տվյալ տիպարն իր քաշով տատանվում է 50-ից մինչև 2000 կիլոգրամ: Պայթման հարվածի ավերիչ ուժը, ռումբի մեծությանը համապատասխան, ռումբի պայթման տեղից տարածվում է 40-ից մինչև 250 մետր հեռավորությամբ, 7-ից մինչև 30 մետր ձագարի խորության տրամագծով: 50—150 կիլոգրամ քաշի ռումբերի պայթման ուժը միջնամասային բավական է քաղաքային և արդյունաբերական տիպարի շենքերն ու կառուցվածքներն ավերելու համար. ուստի մեծ քաշը ունեցող ռումբերը հատուկ նշանակություն ունեն գլխավորապես կավելու ծովային նավերի և առանձին՝ հատկապես կարևոր կառուցվածքների դեմ, ինչպիսին են յերկաթուղային կամուրջները:

բ) Բեկորային ռումբեր, վոր նշանակվում են բաց վայրում տեղավորված կենդանի նպատակները (մարդիկ, ձիեր և այլն) հարվածելու համար: Ռումբն ընկնելու ժամանակ պայթում է գետնի յերեսին, մեծ քանակությամբ բեկորներ տալով, ըստ վորում բեկորները ռումբի պայթման տեղից թռչում են զանազան կողմերը 20-ից մինչև 150 մետր հեռավորությամբ, նայած ռումբի հզորությանը: Տվյալ տիպարի ռումբի քաշը տատանվում է 8-ից մինչև 50 կիլոգրամ: Ամենից հաճախ գործադրվում է 8-16 կգրամ քաշի ռումբը:

գ) Հրձիգ ռումբեր, վորն նշանակվում են պահեստների և այն կետերի դեմ գործողության համար, վորտեղ մեծ, քանակությամբ դյուրավառ նյութեր կան: Ռումբի տվյալ տիպարը լցվում է լուսածինով կամ տերմիտով: Պայթումի ժամանակ հրդեհի ոճախ և գոյանում մինչև 3000 աստիճան ջերմաստիճանով, վոր վառվում է մոտ 15 րոպե: Նայած ռումբի կառուցվածքին, կրակը տարածվում է նրա պայթումի տեղից 5-ից մինչև 40 մետր հեռավորությամբ: Ռումբի քաշը տատանվում է 2-ից մինչև 50 կգրամ: Պայթումի սկզբունքի նկատմամբ ռումբերը լինում են բախական և հեռակայական գործողության. առաջինները պայթում են մտնելով շենքի և մակերևույթի ներսը. յերկրորդները պայթում են ողում, վառվող նյութ նետելով անձրևի պես:

1010
42783

դ) Քիմիական ռումբեր, վոր նշանակվում են վայրը վարակելու համար, նպատակ ունենալով դժվարացնել զորքերի, բնակչության և այլի տեղաշարժումները այնտեղ, նույնպես և վարակելու ոմբաձգության յենթակա արդյունաբերական ձեռնարկությունները և այլ կառուցվածքները, այդ գործողությունները կատարելով այլ հարձակումների հետ միաժամանակ (ավերում, հրդեհ և այլն): Այդ ռումբերն ոգտագործվում են նաև կենդանի ուժն անմիջորեն հարվածելու համար:

Ռումբի տվյալ տիպարը լցվում է զանազան գործողության քիմիական թունավորող նյութերով: Ռումբերի քաշը տատանվում է՝ վայրի վրա յերկար ժամանակ մնացող (կայուն) ԹՆ-ով ռումբերի համար—10-ից մինչև 30 կգրամ., անկայուն ԹՆ-ով ռումբերի համար 50-ից մինչև 500 կգրամ.: Կայուն ԹՆ-ով քիմիական ռումբը միջին հաշվով վարակում է 350—750 քառակուսի մետր տարածություն (750 քառակուսի մետր վարակման մակերևույթը ստացվում է այն ժամանակ, յերբ ռումբը պայթում է ողում մոտ 150—300 մետր բարձրության վրա): Անկայուն ԹՆ-ով ռումբը գոյացնում է 15—20 մետր տրամագծով ամպ, լցնելով մոտ 2000—4000 խորանարդ մետր տարածություն (հաշվելով, վոր ԹՆ տարածվում են ըստ բարձրության 10—15 մետր):

3. Ռազմական գործում կիրառվող թունավորող նյութերը պետք է մեծ թունավորություն ունենան, մասսայական պատրաստության համար մատչելի լինեն (հումքի աղբյուրների և ԹՆ պատրաստող քիմիական արդյունաբերության ունակությունն անհրաժեշտ է), եժան լինեն, դրանցից պաշտպանվելը դժվար լինի

նի, ողի և թացության հանդեպ կայուն լինեն և մի շարք այլ հատկություններ ունենան: Այդ ամենը Թ ընտրության գործում ստեղծում է սահմանափակ հնարավորություն: Ներկայումս ոգամական կիրառման մեջ հայտնի չեն ընդամենը մի քանի տասնյակ Թ, որոնք համապատասխանում են վերոհիշյալ պահանջներին: Հայտնի Թ-ից մեծ մասն արդեն գործադրություն են ունեցել անցյալ իմպերիալիստական պատերազմի ընթացքում և հազիվ թե կարելի լինի շատ նոր Թ ստանալ ապագա պատերազմում. իսկ դրանցից ամենաիսները, որոնք այժմ ամենայն հավանականությամբ արդեն հնարած են և գաղտնի չեն պահվում, հիմնականում նույն հատկություններն ունեն, ինչ որ հայտնի նյութերը և տարբերվում են սրանցից դլխավորապես ավելի ուժեղ գործողությամբ և պատրաստության ավելի շատ ժամանությամբ:

Թ կենդանի որդանիզմի վրա իրենց գործողությամբ բաժանվում են հետևյալ հինդ խմբակների. ա) հեղձուցիչ—որոնք ներգործում են շնչառության որդանների (թոքերի, ցնցուղների) վրա, առաջացնելով բորբոքային երևույթներ. (թոքերի բորբոքում, կոկորդի, ցնցուղների կատար և այլն): Այդպիսի Թ պատկանում են՝ քլորը, քլորպիկրինը, ֆոսգենը և այլն:

բ) Թունավոր—որոնք ներգործում են ներքին սիստեմի վրա և փոխում են արյան բաղադրությունը, շատ արագ մահ առաջացնելով որդանիզմում թթվածնի պակասությունից և ներքին սիստեմի լուծանքից (պարալիչ): Այդպիսի Թ պատկանում են՝ ածխածնի ոքսիդը (ածխահոտ առաջացնող գազ), կապտաբբուն և այլ խաժային միավորումներ:

Այդ յերկու խմբակի Թ պատկանում են անկայուն Թ, այսինքն այնպիսիներին, որոնք շատ արագ գոյորշիանում են և այդ պատճառով էլ դրանց գործադրությունը թիկունքների վրա հարձակման ժամանակ մեծ ծավալ չի ունենալ:

գ) Արտասվաբեր—որոնք ներգործում են աչքերի վրա, արտասուքի ուժեղ հոսանք և աչքերի անտանելի դավ են առաջացնում: Այդպիսի Թ պատկանում են՝ բրոմպիկրինը, բրոմացետոֆենոնը և մի շարք բրոմային բաղադրությունները: Տվյալ խմբակը նույնպես հեղձուցիչ և թունավոր ներգործություն ունի, բայց այն քանակությամբ, յերբ արտահայտվում է դրանց արտասվաբեր ներգործությունը, մյուս գործողությունները գրեթե յերևան չեն գալիս:

դ) Գրգռիչ (փոչտացնող)—որոնք ներգործում են քթի ու կոկորդի վրա և մասամբ մաշկի վրա, առաջացնելով ներքին վերջավորությունների գրգռում, որին հետևում է քոր, այրում և յերբեմն էլ վերքեր: Առաջինիներին վերաբերում են դիֆենիլարսին այն՝ նյութերը, որոնք իրենց բաղադրության մեջ ունեն դոսիկ (միչյակ): Դրանցից ամենաուժեղն է լյուիզիտը. որը մաշկի շատ ուժեգ վնասվածքներ և առաջացնում և այդ պատճառով պատկանում է պալարական նյութերի խմբակին:

ե) Պալարական (մաշկի վրա ներգործող)—որոնք վնասում են

որդանիզմի մաշկի և լորձային թաղանթները՝ այրվածքների, գրգռածքների ու վերքերի ձևով: Բացի մաշկի վրա ներգործելուց, Թ տվյալ խմբակը ներգործություն ունի նաև որդանիզմի մյուս մասերի վրա: Այդ խմբակին պատկանում են՝ իպրիտը (մանանեխի գազ), լյուիզիտը և դիկը:

Պալարական Թ ամենակայուն նյութերն են և դրանք կարող են մնալ վայրի և առարկաների վրա մի քանի ժամից մինչև մի քանի շաբաթ, նայած տարվա ժամանակին և վայրի պայմաններին:

Թունավորող նյութերը լինում են. դաղակերպ (գրեթե բոլոր հեղձուցիչ և թունավոր Թ), ծխակերպ (գազային—սրսիններ) և հեղուկ (իպրիտ, լյուիզիտ և հեղձուցիչ Թ խմբակից մի քանիսը):

Բացի որդանիզմի վրա անմիջական ներգործությունից՝ ողի և մոլորդուն շրջապատող առարկաների ու վայրի միջոցով, Թ նույնպես վտանգավոր են կերակրի ու ջրի թունավորման ժամանակ: Հեղձուցիչ և թունավոր խմբակի Թ, կերակրի և ջրի մեջ ընկնելով, նրանց վորոշ մշակումից հետո կարելի յե այնտեղից հեռացնել. բայց հիմնականում Թ մեծ մասը, մանավանդ գազային բաղադրությունները և իպրիտը կերակրից ու ջրից հեռացնելը անհնարին է և այդպիսի վարակված կերակուրը պետք է վոչնչացնել: Այն բոլոր դեպքերում, յերբ կերակուրն ու ջուրը յեղել են այնպիսի վայրում, վորտեղ յենթադրվում է Թ առկայություն, մթերքներից ոգտվելը թույլատրվում է միմիայն բժշկասանիտարական հսկողության կողմից նախնական գննություն և հետազոտում կատարելուց հետո: Անհրաժեշտ է հիշել, վոր Թ նույնիսկ շատ փոքր քանակը, վորը չի կարելի վորոշել հոտառությամբ, կերակրի և ջրի հետ որդանիզմի մեջ մտնելով կարող է պատճառել հիվանդություն ու մահ:

Բոլոր հայտնի Թ-ից մետաղների, դործվածքների և այլ նյութերի վրա հատկապես ուժեղ ներգործություն ունի իպրը, վորը մետաղները ծածկում է ժանգով, իսկ դործվածքներն ուտում փչացնում է: Իսկ մնացած հայտնի Թ շատ թույլ են ներգործում կամ բոլորովին չեն ներգործում: Դրանց ներգործությունը հատկապես թույլ է այն դեպքում, յերբ մետաղներն ու դործվածքները չոր են: Դրանից պարզ է, վոր առանձին առարկաները Թ աղերիչ ներգործությունից պաշտպանելու համար նրանց պետք է չոր պահել և մետաղները ծածկել յուղով, վորը զատում է նրանց դրսի ոդից:

4. Ամիացիան կատարում է քիմիական հարձակում յերկու յեղանակով. քիմիական ռումբեր վայր ձգելով և Թ թափելով: Ցպետք է չափազանցնել քիմիական վտանդը, թեպետ այդ, անկասկած, գոյություն ունի: Անհրաժեշտ է հաշվի առնել այն հնարավորությունները, վոր ունի ժամանակակից ամիացիան բնակավայրերը վարակելու ժամանակ: Մեկ ինքնաթիռը կարող է բարձրացնել մինչև հաշվով մոտ 500 կգր. բեռ (24 քիմռումբեր), վորը

6413—3

նրան հնարավորություն է տալիս վարակելու մոտ 10·000 քառ. մետր տարածություն, այսինքն մեկ քառակուսի կիլոմետր վարակելու համար անհրաժեշտ է 100 ինքնաթիռ, միմիայն քիմիական ռումբերով սպառազինված: Ավելի ուժեղ վարակում կարող է տալ ինքնաթիռներից անմիջապես ԹՆ ցանելը. մեկ ինքնաթիռը 1·000 մետր բարձրությունից կարող է ԹՆ թափել 600—800 մետր լայնությամբ և 100—200 մետր լայնությամբ մակերեսի վրա: Մեկ կիլոմետր մակերեսի վարակման համար կպահանջվի մոտ 20 ինքնաթիռ: Բայց հաշվի առնելով այն հանգամանքը, որ հակառակորդին հաղթել թե ձեռնտու կլինի բացառապես քիմիական հարձակում կատարել, անհրաժեշտ է հաշվի առնել ողային հարձակումների տակտիկան, որ նախատեսում է, բնակավայրերի և թիկունքի այլ կետերի վրա հարձակումների ժամանակ, մոտավորապես 30% (ամենաշատը) քիմիական միջոցներ ունենալ:

Այս վերջին պայմանից յելնելով ԹՆ-ով մեկ կիլոմետր վարակելու համար (միապաղ ցանելով), անհրաժեշտ է, որ հարձակվող ավիացիան կենտրոնացնի 60-ից մինչև 300 ինքնաթիռ: Ուստի հնարավոր համարել ամբողջ քաղաքների տարածության վարակումը (միջին քաղաքը մոտ 50 քառ. կիլոմետր տարածություն ունի, իսկ Լենինգրադը մոտ 250 քառ. կիլոմետր տարածություն ունի) ներկա պայմաններում հաղթել թե կարելի լինի: Բայց և այնպես այն հնարավորությունները, որոնցով ոժտված է ժամանակակից ավիացիան, նույնպես մեծ ուշադրություն են պահանջում դեպի հակողային պաշտպանության (ՀՈՊ) կազմակերպությունը:

5. Հակողային պաշտպանությունը տեղի յե ունենում յերկու ուղղությամբ՝ ակտիվ գործողություններ հարձակվող հակառակորդի դեմ և պասիվ պաշտպանություն նրա հարձակման ժամանակ: Ակտիվ գործողություններն են՝ հակառակորդի ավիացիան կրակով դիմավորել՝ նրան վոչնչացնելու կամ նրա մարտունակությունը նվազեցնելու նպատակով: Պասիվ պաշտպանությունն արտահայտվում է այնպիսի միջոցներ ձեռք առնելով, որոնք պակասեցնում են հակառակորդի հասցրած վնասները, նույնպես և թույլ են տալիս արագ վերացնել հարձակման հետևանքները, անհապաղ վերականգնելով ամերումները և վոչնչացնելով վայրի վրա յեղած հարվածելու միջոցները: Պասիվ պաշտպանության մասին մանրամասնորեն կխոսվի հետևյալ գրույցներում. իսկ այստեղ մենք կանգ կառնենք միայն ակտիվ ՀՈՊ-ի վրա:

Հակողային պաշտպանությունը կառուցվում է՝ պաշտպանության միջոցների արագ գործողության սկզբունքի վրա, նրանց ժամանակին պատրաստի վիճակում դնելու վրա և պաշտպանության համար բնակչության մեծ համերաշխության վրա:

Հատուկ դեր է խաղում ողային դիտողության կազմակերպումը՝ ողային հակառակորդին ժամանակին հայտաբերելու և մատնող վտանգի մասին տեղեկացնելու համար, պաշտպանության միջոցները պատրաստի վիճակի բերելու նպատակով: Այդ կազմակերպությունը կոչվում է ՈԴՊ (ողային դիտողություն, պաշտպանություն, կոդ). այդ արտահայտվում է սահմանից մինչև պաշտպանվող կետերը պոստերի ցանց դնելով: ՈԴՊ պոստերը ամբողջ որուղիները դիտողություն են կատարում և նրանց կողմից նկատած ողային հակառակորդի ամեն մի շարժման մասին անհապաղ հայտնում են նրանք պաշտպանվող կետին:

Հակառակորդի դեմ ակտիվ պայքար մղելու համար կիրառվում են հետևյալ միջոցները. ա) կործանիչ ավիացիա—թեթև դյուրաշարժ ինքնաթիռներ, որոնք արագ վեր են բարձրանում, զինված են գնդացիրներով, սովորաբար դուրս են թռչում ՈԴՊ պոստերից հակառակորդի մասին տեղեկություն ստանալուն պես: Կործանիչները մարտ են մղում ողում հակառակորդի դեմ, հարվածելով նրան գնդացրային կրակով, թույլ չտալով հակառակորդին մեր թիկունքն անցնելու: Կործանիչ ավիացիայի գործադրությունը հնարավոր է միայն հատկապես կարևոր և խոշոր կետերի պաշտպանության համար, որովհետև ողում ռմբակոծողների դեմ նրանց գործողության համար անհրաժեշտ է քանակային գերակշռություն, քանի որ ռմբակոծողներ նույնպես զինված են և շարժվում են այնպիսի շարքերով, որոնք թույլ չեն տալիս առանձին կործանիչներին հարձակում կատարել բռնվածին հարվածող գործողությամբ:

բ) Զենիթային հրետանի, որը կռվի է մղում ռմբակոծող ավիացիայի դեմ գնդակոծելով հատուկ հրետանական գարց և Ռոզենբերգի տիպարի տրկերով կամ սովորական չրապնելով, որ գործադրում է դաշտային հրետանին՝ կենդանի նպատակները ռմբակոծելու համար: Ժամանակակից զենիթային հրետանին կարող է ռմբակոծել ինքնաթիռը, որ գտնվում է մինչև 5 կիլոմետր բարձրության վրա և մինչև 9 կիլոմետր հեռավորության վրա իր կանգնած կետից, 360° շրջադարձի վրա: Հատկապես գործում է զենհրետանու կրակը 2—3 կիլոմետր բարձրության վրա, այսինքն այն բարձրությունների վրա, որոնցից ռմբակոծողների համար ամենից շատ ձեռնտու յե ռմբաձգություն կատարել: Առանձին որյեկտները պաշտպանելու համար զենհրետանին դասավորվում է 2—4 հրանոթից բաղկացած մարտկոցներով, դեպի այդ որյեկտները յեղած ամենակարևոր մատույցների վրա ստեղծելով գնդակոծման զոտիներ: Հրետանական կրակի 2—3 շերտից բաղկացած: Նկատի ունենալով ինքնաթիռների թռիչքի մեծ արագությունը, զենհրետանին պետք է ոժտված լինի մեծ արագաձգությամբ, որը տատանվում է 6-ից մինչև 8 ձիգ մեկ րոպեում:

Զենհրետանու դիզերային հրաձգությունը հեշտացնելու համար, նրան լուսարձակային մասեր են տրվում, որոնց պարտականությունն է լուսավորել հակառակորդին: Իսկ գիշերը ողում ռմբակոծողներին գտնելու նպատակով դոյություն ունեն հատուկ անոթներ, որոնք վարում են հնչյունի ուղղությունը, որ գալիս է մատորի և պրոպելլերի աշխատանքից: Այդ անոթներով—ձայ-

ռակետային գործողության հեռավորությունը սահմանվում է 15-ից մինչև 20 կիլոմետր:

գ) Զենիթային գնդացիրներ, որոնք տրվում պանդան տեսակի օբյեկտներին՝ ինքնաթիռների հարձակումից պաշտպանելու համար, յերբ նրանք թռչում են 1·000 մետրից պակաս բարձրության վրա: Դրանք բաղկացած են 2—4-ական գնդացիրներից բաղկացած խմբակներով, ոժտված լինելով մինչև 1·000 մետր կրակի հեռավորությամբ հոբիզոնի վրայով:

Զենիթային հրանոթներով հրաձգության ժամանակ, բնակչությունը փողոցներում պետք է խիստ կարգապահություն պահպանի, որովհետև ընկնող չպայթած արկերն ու բեկորները կարող են մեծ վնաս հասցնել տներում չթաքնված քաղաքացիներին: Հետևապես ոչում տեղի ունեցող մարտին «թամաշա» անել չի կարելի:

ՀՈՊ ակտիվ միջոցները կիրառվում են համագործակցությամբ, այսինքն կործանիչ ավիացիայի, զենիթային հրետանու և զենիթային գնդացիրների գործողությունները կատարվում է համաձայնեցրած ձևով:

6· Ապագա պատերազմում գործադրվելիք հարձակման միջոցները չատերում սատիկ սարսափ են առաջացնում: Բայց այդ բացատրվում է նրանով, որ ուղղակի չեն իմանում, թե ինչպես պաշտպանվել և, մյուս կողմից վտանգի չափազանցումով: Շատ վնասակար է աչքերը փակել սպառնացող վտանգի հանդեպ, բայց միևնույն ժամանակ չպետք է տարտարի մեջ ընկնել: Ամբողջ բնակչության հիմնական խնդիրն է՝ ակտիվ մասնակցություն ունենալ պաշտպանության կազմակերպության գործում: ՀՈՊ-ին ակտիվ մասնակցությունը ապահովում է ՀՈՊ-ի միջոցառումների իրականացումը, իսկ դրանով էլ, ուրեմն պակասեցնում է հարվածների հնարավորությունը: ՀՈՊ գործն է միայն այն դեպքում, յեթե դրան մասնակցում է ամբողջ բնակչությունը: Կապիտալիստական պետությունների հանդեպ մեր առավելությունն այն է, որ միայն ԽՍՀՄ-ում աշխատավոր բնակչությունը, պաշտպանելով իր յերկիրն ու Հոկտեմբերի նվաճումները, կարող է ստեղծել ՀՈՊ-ի մասսայական կազմակերպություն:

ԶՐՈՒՅՑ ՅԵՐՐՈՐԴ

Անհատական բիմպաշտպանության միջոցները ու դրանց գործածությունը

Զրույցի նպատակը·

1) Աշխատել, որ ունկընդիրները յուրացնեն, որ անհատական պաշտպանությունը բնակչության լայն խավերի հակաքիմիական պաշտպանության ամենամատչելի տեսակն է և բնակչության հակողային պաշտպանության հիմնական սարքերից մեկն է:

2) Պարզաբանել, որ հակագազը առաջին անհրաժեշտության առարկա է և որ դրան տիրապետելը պետք է սովորի ամեն մեկը:

Զրույցի պլանը·

1· Անհատական պաշտպանության նշանակությունը:

2· Անհատական պաշտպանության տեսակները:

3· Ի՞նչ է հակագազը և ինչպես է դա պաշտպանում ՄԹՆ-ից· հակագազի կառուցվածքը, ոգտվելու կանոնները և հակագազը խնամելու կանոնները· որտեղ և ինչպես ձեռք բերել հակագազը:

4· Ի՞նչ է պաշտպանական հագուստը· դրա կառուցվածքը· հատկացողություն դրա նշանակման և դրանից ոգտվելու մասին:

5· ՄԹՆ-ից պաշտպանությունը առձեռն միջոցներով· կրկնակոշիկներից, բոտերից, թաշկինակներից, լաթերից, ծղոտից և այլից ոգտվելը:

6· Անհատի իրեն պահելու կանոնները ոդաքիմիական հարձակման պայմաններում:

Դանապեկտ·

Մարտական թունավորող (քիմիական) նյութերը վնասում են մարդուն և կենդանուն շնչառության դրդարանների, աչքերի և մաշկի միջոցով: Հետևապես մարմնու այդ մասերը պաշտպանելու համար անհրաժեշտ է ծածկել քիմիական նյութերի համար անթափանց վորևե ծածկոցով: Շատ հարմար կլիներ ամբողջ բնակչության համար կառուցել հատուկ անթափանց տներ (զազապատաններ): Բայց այդ անհնարին է, վորովհետև այդպիսի տները շատ թանգ են արժենում, իրենց կառուցվածքով բարդ են և այլն:

Ուստի, հիմնականում հարկ է լինում պաշտպանությունը կատուցել յուրաքանչյուր մարդու համար առանձին, այսպիսի անոթների ձևով, վորոնք ծածկում են մեր մարմնի մասերը, և այնպիսի միջոցառումների ձևով, վորոնք վերացնում կամ պակասեցնում են քիմիական նյութերի հասցրած վնասները: Հենց այդպիսի պաշտպանությունն էլ կոչվում է անհատական պաշտպանություն, իսկ այն միջոցներն ու անոթները, վոր գործադրվում են դրա համար, կոչվում են անհատական պաշտպանության միջոցներ («Անհատ»—նշանակում է «անձնավորություն», «անհատական»—նշանակում է «անձնական»):

Անհատական պաշտպանությունը ներկայացնում ՄԹՆ-ից պաշտպանության ամենահուսալի և ամենատարածված յեղանակն է:

Մեր ամբողջ մարմինը մեկ անոթով պաշտպանելն անհնարին է: Հարկ է լինում դիմել մի քանի անոթների և միջոցառումների:

Շնչառության դրդարանների և աչքերի պաշտպանության համար գործադրվում է մի անոթ, վոր կոչվում է «հակագազ»: Բայց հակագազը չի պաշտպանում մաշկի ամբողջ մակերևույթը: Մաշկը պաշտպանելու համար գործադրվում է մի ուրիշ անոթ, վոր կոչվում է «պաշտպանական կոստյում» կամ «պաշտպանական հագուստ»: Հակագազն ու հագուստը լիովին պաշտպանում են մարդու ամբողջ մարմինը, յեթե դրանցով համարեն զգուշանք:

Եթե մարդ հակագազ կամ կոստյում չունի, այդ դեպքումն էլ նա կարող է վորոշ չափով իրեն պաշտպանել ՄԹՆ–ից և պակտանեցնել, թուլացնել այն վնասը, վոր հասցնում են գրանք մեր որգանիզմին, ինչպես առձեռն զանազան միջոցներ ողտագործելու միջոցով, այնպես էլ նպատակահարմար կերպով իրեն պահելով: Այդ նույնպես անհատական պաշտպանության տեսակներից մեկն է:

Այժմ քննության առնենք պաշտպանության յուրաքանչյուր այդ տեսակն առանձին–առանձին:

Հակագազ·

Ամենատարածվածը քամող հակագազերն են (քամել—նշանակում է «մաքրել»): Քամող հակագազերը, վորակված ողը մաքրելու, գործում են հակահագի տուփի մեջ յեղած զանգվածքով՝ ՄԹՆ–ը կլանելու միջոցով: Հակագազով ողտվելու ժամանակ, ողը մտնում է շնչառության ուղիների մեջ միմիայն ՄԹՆ–ի կլանիչի միջով:

ՄԹՆ կլանիչը բաղկացած է յերեք բաղադրությունից, ա) ակտիվացրած ածուխ, վորը հիմնական կլանիչն է և ընդունակ է կլանել գրեթե բոլոր գազակերպ ՄԹՆ· բ) հակածխային քամոց (քամակ, թաղիք, հատուկ թուղթ և այլն) պահում է ամպակերպ և ծխակերպ ՄԹՆ· գ) քիմիական կլանիչի հատիկներ, ծառայում են այն ՄԹՆ կլանելու համար, վորոնք թույլ են կլանվում ածուխի և հակածխային քամոցի կողմից[1]):

Քամող հակագազերը լինում են զանազան տիպարների, վորանցից ամենատարածվածներն են ՄՀՍ (ԲՀ) ՄԹ–1 և ԳՄ–3 հակագազերը:

ՄՀՍ (ԲՀ))—հզոր հակագազ է և հիմնականում նշանակված է զորքերի և ՀՈԳ–ի մասին ապատարկելու համար (տյոխնիքն այն անձնավորությունների համար, վորոնք իրենց հատուկ պարտականությունների պատճառով հարկադրված են յերկար ժամանակ զանվել և աշխատել թունավորված մթնոլորտում):

ՄԹ —1 և ՄԹ —3 հակագազերի հզորությունն ավելի պակաս է, բայց գրանք ավելի քիչ են դիմադրություն ցույց տալիս շնչառությանը և նշանակված են բնակչության լայն խավերի ապատարկման համար:

Հակագազերը բաղկացած են հետևյալ հիմնական մասերից:

---

[1]) Այսպես, յեթե ժամանկն ու պարագան թույլ են տալիս, հանձնարարվում է ցույց տալ հետևյալ փորձը, վոր ցույց է տալիս հակագազի գործողությունը·

1· Պղինձակ ապակե շշիկի մեջ մեկ կաթիլ բրոմ են դցում: Գոլորշիացած կաթիլը դարձ կարմրավուն գույնի շղթի յե տալիս, վոր ցույց են տալիս պարանին: Շշիկի մեջ դցում են միքանի հատիկ ակտիվացրած ածուխ: Շշիկը թափ են տալիս: Գույնն անհետանում է: Ածուխը կլանել է բրոմը:

Հակագազային տուփ, կորդակ–քողարկ, ներշնչման և արտաշնչման կափույրներ և պայուսակ[2]):

Հակագազն ստանալիս, անհրաժեշտ է նրան խնամքով դնել պայուսակից հանել վաթաթելու թուղթը և բոլոր կողմնակի առարկաները, դնել ներքևի բացվածքը և, յեթե դա ծածկված է ռովարաթուղթով հետևյալ մակագրով՝ «հանել գործածության համար ձեռքը տալիս»—հանել այն:

Հակագազը կրում են յերեք դրությամբ· ա) («յերթական դրությամբ», բ) «պատրաստի» և գ) «մարտական դրություն»):

«Յերթական դրության» ժամանակ հակագազը կրում են պայուսակի մեջ, ձախ կողմի վրա, ըստ վորում պայուսակի փոկն անցնում է աջ ուսի վրայով: Արշալույսի վիճակում հակագազը պահում են այն բոլոր դեպքերում, յերբ քիմիական վտանգ չկա: Պատերազմի ժամանակ հակագազը միշտ պետք է մեզ մոտ լինի՝ թե ծառայության ժամանակ, թե հյուր գնացած ժամանակ և թե թատրոնում, փողոցում և այլն:

«Պատրաստի» դրության հակագազը բերվում է այն ժամանակ, յերբ սպասվում է ՄԹՆ յերևան գալը («Ողային տագնապի» տպդանշան տալու պայմաններում) կամ յերբ մոտենում ենք այն տեղին, վորտեղ յենթադրվում է ՄԹՆ առկայությունը:

«Մարտական դրության» հակագազը բերվում է այն ժամանակ, յերբ քիմիական վտանգն արդեն ակնհայտ է դարձել· այդ դեպքում նրա կորդակը հագցնում են յերեսի վրա[1]):

Հակագազով ողտվելը սովորելու համար, անհրաժեշտ է կանոնավոր մարզանքներ կատարել հակագազի կրելու մեջ: Մարզանքը պետք է անցկացնել խաղաղ ժամանակից, հակագազը կրելն սկսելով հակագազը հագած 5 րոպե մնալուց և ամեն որ ավելացնելով 1—2–ական րոպե և այդ ժամանակը հասցնել մինչև 1 ժամի:

Հակագազն արժեքավոր դույք է: Հակագազի ամենափոքր անսարքությունը կարող է անպետք դարձնել այն: Հակագազը սարքին պահելու համար անհրաժեշտ է·

ա) պահպանել այն հրումներից, հարվածներից և ուժեղ ցնցումներից, վորոնք կարող են խախտել տուփի սարքին վիճակը·

բ) պահպանել այն խոնավությունից և թացությունից, քանի վոր, կլանիչը ներծծելով թացությունը, խոշոր չափով պակասեցնում է իր պաշտպանական հատկությունները, իսկ մետաղե մասերը ժանգոտում են և յենթարկվում են փչացման·

---

[2]) Լսարանի միքանի անձնավորության տալիս են հոտ քաշել Ֆլորպիկրին (զգույշ) շշիկից· Նրանք նրանք համոզվում են, վոր ֆլորպիկրինի գոլորշիներն անտանելի յեն, շշիկի բացած բերանը դնում են հակագազի ներքևի բացվածքին և չունչ են քաշում հակագազի միջով: Լսարանը համոզվում է, թե ինչպես է գործում հակագազը:

[1]) Անհրաժեշտ է ցույց տալ այդ բոլոր մասերը քաղաքացիական հակագազերից մեկի վրա կամ նույնիսկ պլակատի վրա:

[2]) Պարզ ցույց է տրվում հակագազի բոլոր դրությունները·

գ) հակադազով ոգտվելուց հետո, պետք է խնամքով սրբել և չորացնել այն և միայն դրանից հետո խնամքով ծալել ու դնել տուփի մեջ։

դ) հակադազը պահպանել ջերմաստիճանի (ցուրտ, տաք) ուժեղ տատանումներից, վորովհետև դրանից փչանում և տեսքին։

ե) զգուշ վերաբերվել կավուչների հետ, հատկապես սրտաշնչման կավուչի հետ։

զ) յերբեք թույլ չտալ պայուսակի մեջ դնելու կողմնակի առարկաներ, վորովհետև դրանք կարող են պատռել հակադազի ռետինե մասերը և դժվարեցնել կորդակն արագ հանելը։

Հակադազեր ձեռք բերելը հանձնարարվում է ամբողջ բնակչությանը դեռ խաղաղ ժամանակ։ Լավ հակադազն արժե 10–11 ռ.։ Ձեռք բերել կարելի յե ՊԱԶԸ–Ավիաքիմի բջիջի միջոցով կամ ՊԱԶԸ–Ավիաքիմի խանութում։ 1931 թ. ՊԱԶԸ–Ավիաքիմը Լենինգրադում չուկա յե հանել 300·000 հակադազ։

Պաշտպանական հագուստ։

Պաշտպանական հագուստն իրենից ներկայացնում է մի կոստյում, վորի կուռտիկը, շալվարը, գուլպաները և կնդուզը միասին են կարված («Կոմբինեզոն»)։ Հագուստի պաշտպանական հատկությունները ստացվում են հատուկ սպիտակեղեն գործվածքը խբիթելով դյանտյին յուղի և կոտավատի ձեթի խառնուրդով։ Պաշտպանական հագուստն ապահովված պաշտպանություն է տալիս 2—4 ժամվա ընթացքում։

Պաշտպանական գործվածքը հեղուկ ԹՆ կամ դրա գոլորշիների հետ շփում ունենալու ժամանակ լուծում է ԹՆ-ը իրեն խիտ խառնուրդի մեջ և գործվածքի մակերևույթի վրա, այնպես վոր ԹՆ թափանցումը գործվածքի միջով կատեցվում է մի քանի ժամով, և դրանով իրականացվում է մաշկի մակերևույթի պաշտպանությունը։

Պաշտպանական հագուստով ոգտվելը շատ հոգնեցնում է և այդ հագուստը հագած աշխատելը 1–2 ժամվա ընթացքում հնարավոր է միայն լավ մարզված անձնավորությունների համար։ Պաշտպանական հագուստը գրեթե անթափանց է նաև ոդի համար։ Ուստի կոստյումը հագած ժամանակ մեր մաշկի շնչառությունը դժվարացնում է, վորը նույնպես հոգնածություն է առաջացնում։ Պաշտպանական հագուստը հագած վարակված մթնոլորտում լինելուց հետո, ամեն անգամ զգաստանման յենթարկել (ԹՆ-ից մաքրել) հատուկ պարմաններում։

Նկատի ունենալով, վոր պաշտպանական հագուստով ոգտվելը բարդ է, հագուստը մեծածավալ ու թանդ է և միևնույն ժամանակ դժվարացնում է մարդու գործողությունը, այդ հագուստը կարող է գործադրվել գլխավորապես այն անձնավորությունների կողմից, վորոնք հարկադրված են, իրենց հատուկ նշանակման պատճառով,

դանվել ԹՆ մթնոլորտում և այդ մթնոլորտում վորևե աշխատանք կատարել[1])։

Պաշտպանություն առձեռն միջոցներով։

Ցերբ ոդը թունավորված է վորևե ՄԹՆ, իսկ հակադազ չկա, կարելի յե պաշտպանության միջոցներ ձեռք առնել ձեռքի տակ յեղած միջոցներով։ Պետք է մի կտոր գործվածք կամ լաթ վերցնել, դրան մի քանի անգամ ծալել, թրջել ջրով, դնել քթի ու բերանի վրա և շունչ քաշել դրա միջով, աչքերը պինդ փակելով։ Ել ավելի լավ է լաթի մեջ մի չերտ փափկացրած հող դնել։ Ապա պետք է արագ դուրս գալ այն տեղամասի տահմաններից, վորը յենթարկվել է քիմիական հարձակման։

Ցեթե անհրաժեշտ է շարժվել այնպիսի վայրով, վորը վարակված է պալարական ԹՆ-ով, և պաշտպանական հագուստ չկա, այդ դեպքում հնարավոր է ոգտվել հարմարեցրած հագուստով։ Առաջին հերթին անհրաժեշտ է ծածկել վոտները, վորովհետև դրանք ամենքիչ պաշտպանված չփում են ունենում վարակված մակերևույթի հետ։ Դրա համար կարելի յե ոգտագործել սովորական կրկնակոշիկները, հագնելով դրանց վոտնամանի վրայից, փայտե կաղապարներ (խոբը), բատեր, նույնպես և վոտները փաթաթելը ծղոտով, չոր խոտով, լաթերով և այլն։ Իրանը կարելի յե փաթաթել ռետինե կամ բրեզենտե թիկնոցով (պլաշչով), թաշկինակներով, վերմակով, խիտ գործվածքով և այլն։ Վարակված տեղամասն անցնելուց հետո, ժամանակավոր պահպանական միջոցներն անմիջապես և զգուշ կերպով հանել։ Լաթերը, ծղոտը, չոր խոտը և այլն պետք է այրել։ Բատերը, կրկնակոշիկները, թիկնոցները և այլ հագուստեղենը պետք է զգաստանել։ Վրանները, հագուստեղենը, թաշկինակները, յեթե դրանց վրա հեղուկ ԹՆ հետքեր չկան, պետք է խնամքով քամահարել մինչև ԹՆ հոտի միանգամայն անհետանալը։ Իսկ յեթե հեղուկ ԹՆ հետքեր կան, դրանց պետք է հանձնել զգաստանման, իսկ ուժեղ թունավորման դեպքում պետք է վոչնչացնել (այրելով, դեռևս տակ թաղելով)։

ՈԴԱ-ՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԻՐԵՆ ՊԱՀԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հակադազերի և պաշտպանության այլ միջոցների հետ միասին, ոդա-քիմիական հարձակման ժամանակ պաշտպանության ամենաբնական միջոցն է՝ իրեն պահելու կանոնների պահպանումը, վորը հիմնականում բաղկացած է հետևյալից։

ա) չենթարկվել խուճապի և խստորեն կատարել ոդա-քիմիական հարձակման ժամանակ բնակչությանն իրեն պահելու վերաբերյալ հատուկ հրահանգի բոլոր ցուցումները։

բ) հակադազը միշտ իր հետ ունենալ, ապահովելով դրա տարքին վիճակը, կանոնավոր կերպով պահելով։

[1]) Ցույց է տրվում պաշտպանական հագուստը, ժանկիենը կամ պլաշչը։

գ) յեթե հարկավոր է անցնել այնպիսի ԹՆ-ով վարակված տեղով, վորտեղ ներգործում են մաշկի վրա, կիրառել հարմարեցրած պաշտպանական հագուստը.

դ) այնպիսի տեղում յեղած ժամանակ, վորտեղ կա վարակում կամ վարակման կասկած, պետք է խուսափել առարկաների հետ չխում ունենալուց, չնստել և չպառկել գետնի և առանձին առարկաների վրա: Յեթե անհրաժեշտ է չխում ունենալ առարկաների կամ գետնի հետ, վոր վարակված են ԹՆ-ով, պետք է ոգտվել թիով, կեռով, լաթերով և այլն.

յե) ԹՆ-ով վարակված տեղում կամ մթնոլորտում լինելուց հետո, չպետք է ձեռքերով դիպչել աչքերին, յերեսին, սեռական անդամներին և մարմնի այլ մասերին, մինչև վոր նախապես չհամոզվենք, վոր ձեռքերը վարակված չեն: Ձեռքերը պետք է լավ լվանալ.

զ) յեթե մարմնի կամ հագուստի վրա հայտաբերված են ԹՆ-ի կաթիլներ կամ քսվածք, պետք է անմիջապես հեռացնել այն, առանց տարածելու: Դրա համար պետք է ոգտվել բամբակով, լաթով, ծծան թղթով, փոխելով դրանց մի քանի անգամ: Դրանցից հետո վարակված տեղը խնամքով լվանալ սպիտակ նավթով, բենզինով, սպիրտով և այլն, կամ ջրով ու սապոնով, շատ անգամ տապոն քսելով.

է) վարակված վայրից դուրս գալուց հետո, անմիջապես մի-ջոցներ ձեռք առնել ամբողջ մարմինը լվանալու և հագուստը քամահարելու համար: Հատուկ խնամքով մաքրել վոտնամանները.

ը) չպետք է ոգտվել վարակված տեղից բերած կերակրից, ջրից և այլն, մինչև դրանցից ոգտվելու մասին բժշկից թույլտվություն առնալը: Կերակուրը, ջուրը և այլն փչանալուց պահպանելու, անձնական պաշարի համար, այդ առարկաները պետք է լավ ծածկած պահել (կերակուրը ծածկած սեղանում կամ մոմած թղթի մեջ, ջուրը ծածկած սափորի մեջ և այլն).

թ) իր վրա ԹՆ հայտաբերելու բոլոր դեպքերում, թեկուզ և տեղում ԹՆ-ից պաշտպանելու և մաքրելու միջոցներ ձեռք առնելուց հետո, պետք է անպատման դիմել բժշկական կայանին, ավելի մեծ խնամքով բժշկասանիտարական մշակման յենթարկվելու համար:

Յուրաքանչյուր քաղաքացի պետք է իմանա, վոր ոգա-քիմիական հարձակումների ժամանակ, բնակչության պաշտպանությունը խոշոր չափով ընկնում է հենց բնակչության ուրեն վրա: Բնակչության պաշտպանության գլխավոր տեսակն է՝ անհատական պաշտպանության միջոցներն ու միջոցառումները: Անհրաժեշտ է խաղաղ ժամանակից ստանալ իրեն պաշտպանության հնարավոր ու մատչելի միջոցներով և սովորել, թե ինչպես ոգտվել դրանցից:

ՉՐՈՒՅՑ ՉՈՐՐՈՐԴ

Աշխատավորների մասնակցությունը հակոդային պաշտպանության գործում և նրանց պարտականությունները հակառակորդի ոդային հարձակման ժամանակ:

Չրույցի նպատակը.

1. Պետք է աշխատել, վոր պարզ հասկանան, վոր պասսիվ ՀՈՊ կազմակերպությունն անհնարին է առանց աշխատավորների ակտիվ մասնակցության:

2. Բացատրել բնակչությանն իրենց պահելու կանոնները ոդային հարձակման ժամանակ:

Չրույցի պլանը.

1. Հակառակորդի ոդային հարձակման որյեկտները:
2. Ինչ է «Պասսիվ ՀՈՊ» և ինչից է այդ բաղկացած:
3. Աշխատավոր բնակչության դերը պասսիվ հակոդային պաշտպանության մեջ: Բնակչությունից կազմակերպված ՀՈՊ խմբերը:
4. Բնակչության «հակոդային կրթությունը»:
5. Բնակչությանն իրեն պահելու կանոնները «Ոդային տագնապ» ազդանշան տալու դեպքում:
6. «Քիմիական տագնապ» ազդանշանների ժամանակ բնակչությանն իրեն պահելը:
7. Բնակչության դերը ոդային հարձակման հետևանքները վերացնելու գործում:

Կանոնակ.

1. Ամրապնդության համար բնակավայրում (քաղաքում) որյեկտներ ընտրելու ժամանակ, հակառակորդն առաջին հերթին ուշադրություն կդարձնի ամենակարևոր կետերի վրա, որինակ՝ կամուրջների, յերկաթուղային կայանների, ֆաբրիկների, գործարանների, ելեկտրակայանների, գորքերի զորանոցների ու շտաբների, պետական հիմնարկների վրա և այլն: Այդպիսով, ոդային հակառակորդի կողմից վորևե կետի ռմբակոծումից հետո կարելի յե ոգտագործել հարվածի յենթարկված մի քանի բազմատեսակ ոջախներ: Հարվածի այդ ոջախները մեծ մասամբ դասավորված կլինեն ամենակարևոր որյեկտների ատյաններում, ըստ վորում այդ ոջախները կտարածվեն, վոչ միայն որյեկտի տեղամասի վրա, այլև դրանց մոտի բնակելի թաղերի տեղամասերի վրա:

Բացի այդ, հակառակորդը կարող է իրեն համար նաև հատուկ խնդիր դնել ռմբակոծելու ամբողջ բնակավայրը, նկատի առնելով բնակչությանը խոշոր չափով հարվածելու և նրան բարոյալքելու: Այդպիսի դեպքերում կարող է յենթակա լինել խոշոր ավերման և կարելի յե ոգտագործել ամբողջ ատյանների հարվածում:

Ոդային հարձակման հետևանքները մեղմացնելու նպատակով.

գնահատելիությունները և արդյունաբերական որակներում կազմակերպվում և պասսիվ հակողային պաշտպանության ծառայություն:

2. Պասսիվ հակողային պաշտպանությունը դիմավորապես հիմնվում է այն միջոցների վրա, որոնք գոյություն ունեն խաղաղ ժամանակ մեր առորյա կյանքում: Այդ պաշտպանությունը կազմակերպվում և արդյունաբերական ձեռնարկությունների բանվորներից և բնակչությունից հատուկ ծառայություններ ու խմբեր ստեղծելու միջոցով, որոնք նպատակ ունեն.

ա) ապահովել ձեռնարկությունների անընդհատ աշխատանքը ոդային հարձակման ժամանակ.

բ) ամենակարճ ժամանակամիջոցում վերացնել ոդային հարձակման հետևանքները.

գ) անհրաժեշտ ոգնություն ցույց տալ վնասված բնակչությանը և կենդանիներին:

Այդ նպատակներով ստեղծվում են մի չարք ՀՈՊ խմբեր:

1. Դիտողության և հետախուզության—(ՈԴԻՏ), որոնց նպատակն է՝ հետևել հակառակորդի ավիառեյդերի անկումին, հետաքննել պայթյունների տեղերը և անմիջապես տեղեկություն տալ ՀՈՊ շտաբները, թե որտեղ, որքան և ինչպիսի ռումբեր են պայթել:

2. Քիմիական (գազահանման)—թունավորող նյութերի (ԹՆ) դեմ պայքար մղելու համար վարակված վայրի գազահանման միջոցով:

3. Հեղափոխական կարգի պահպանման—հարձակումների ժամանակ միլիցիային ոգնելու և կարգ դահպանելու, խուճապի, կողոպուտների դեմ պայքարելու համար և այլն:

4. Բժշկասանիտարական և անասնաբուժական—վիրավորված և թունավորված մարդկանց ու կենդանիներին ոգնություն հասցնելու համար:

5. Հրդեհաշեջ—հրդեհների դեմ պայքարելու համար:

6. Վերականգնիչ—որոնք կազմակերպվում են ձեռնարկություններում ամենաարագ կերպով արտադրությունը վերականգնելու համար, նույնպես և ռայոններում ջրմուղը, էլեկտրաստանցիան և այլն վերականգնելու համար:

Վերջապես, ոդային հարձակումների ժամանակ աշխատող բանվորները (այդ միջոցին ձեռնարկությունների աշխատանքը չի դադարեցվում) կազմում են շահագործման խմբեր:

Դրան համապատասխան այնտեղ, որտեղ կազմակերպված են խմբերը (ձեռնարկում, քաղաքամասում, ռայոնում կամ բնակավայրում) նրանք սպասարկում են կամ տվյալ օբյեկտի (ֆաբրիկայի, գործարանի, երկաթուղային հանգույցի), քաղաքամասի, ռայոնի տեղամասը, կամ ամբողջ բնակավայրը:

ՀՈՊ խմբերը կազմվում են այն բանվորների և ծառայողների կազմից, որոնք ռազմական գործողությունների սկզբից չեն դնում ԲԳԿԲ, 17-ից մինչև 50 տարեկան տղամարդիկ և մինչև 45 տարեկան կանայք:

Ընդհանրապես, պասսիվ ՀՈՊ կազմակերպությունը պահանջում է լուրջ պատասխանատվություն և մեծ թվով աշխատավորների ներգրավում:

Գեղության վարդապետությունների համաձայն, ձեռնարկությունների բոլոր բանվորները պարտավոր են ուսումնասիրել ինքնապաշտպանության կանոնները, իսկ ձեռնարկության ՀՈՊ խմբերը կազմվում են պարտադիր կարգով:

3. Պակաս կարևոր չեն նաև բոլոր քաղաքացիների ինքնապաշտպանությունը: Այդ նպատակով ստեղծվող խմբերը— (ՀՈՊ բնակվարձկոոպների, թաղային խմբերը) կազմակերպվում են կամավորական հիմունքներով. ուստի և կարևոր է նրանց ապահովել կարգապահ և տակուն անձնական կազմով: ՀՈՊ գործում պետք է ներգրավված լինեն նաև աշխատավոր կանայք, որոնք այդ գործում պետք է փոխարինեն ֆրոնտ գնացող տղամարդկանց:

ՊԱՀԸ–Ավիաքիմի վրա ամբողջովին ընկնում է ՀՈՊ թաղերին և բնակարանային միավորություններին կից կազմվող հակողային պաշտպանության խմբերի կազմակերպությունն ու պատրաստությունը: Բնակարանային Միությունը ՊԱՀԸ–Ավիաքիմի ամենամոտիկ ոգնականն է ՀՈՊ խմբերի կազմակերպման և բնակվարձկոոպների բնակչության հակողային անդրագիտության վերացման գործում. բացի այդ, Բնակարանային Միության վրա ընկնում է կազմակերպվող խմբերը շենքով, ուսումնական և մարտական զույգերով ապահովելու գործը:

Բնակվարձկոոպների խմբերի խնդիրն է՝ ապահովել հարձակման հետևանքների դեմ պայքարը ուժ, բնակվարձկոոպի, թաղի տեղամասում: Այդ խմբերը կազմում են դանազան մասնագիտությունների ջոկերից՝ քիմիական, սանիտարական, կարգ պահպանելու, հրդեհաշեջ և կապի:

Բնակվարձկոոպների խմբերն իրենց քանակությամբ փոքրաթիվ են, դրանց սպասարկման ռայոնը փոքր է և կարող են շատ արագ հավաքել տաղնապի դեպքում և անմիջապես գործողության անցնել: Նրանք պետք է ապահովեն.

ա) ոդաքիմիական հարձակումից վնասված բնակչությանն արագ ոգնություն հասցնելը.

բ) առաջացած խուճապի, անկարգությունների դեմ կողոպուտների առաջն առնելը.

գ) ժամանակին միջոցներ ձեռք առնելը հրդեհների ոջախները վերացնելու և շենքի այլ մասերի վրա հրդեհը տարածվելու հնարավորությունը սահմանափակելու համար.

դ) ԹՆ վարակման փոքր ոջախների վերացումը:

ՀՈՊ խմբերում մասնակցությունը, նույնպես և հակողային անդրագիտության վերացումը կազմում են բնակչության գործնական աշխատանքի ամենակարևոր տեսակները ոդաքիմիական հարձակումից մեր յերկիրը պաշտպանելու գործում:

8. Հակողային պասսիվ պաշտպանության ծառայությանն ա-

առաջադրվող հիմնական պահանջն է՝ հնարավորություն տալ անմիջապես հակազդելու այն անցքերի վրա, որոնք առաջացել են ազգային հարձակումից։ Այստեղից հետևվում է, որ անհրաժեշտ է կազմակերպել բնակչության արագ տեղեկացումը հակառակորդի հարձակման մասին, ապահովել խմբերի արագ հավաքը և նրանց արագ փոխադրությունը դեպի հարվածի վայրը։ Դրա համար անհրաժեշտ է կապի ծառայության վորոշակի կազմակերպություն և ավտոտրանսպորտի առկայություն։

Պետք է հիշել, որ պասսիվ ՀՈՊ գործողությունների ամենափոքր հապազդումն ու խախտումը (տեղեկացում, հրդեհը հանդցնելը, դաղահանում և այլն) կարող է խոշոր չափով ապատկացնել հարձակման հետևանքները, իսկ յերբեմն ել նույնիսկ կատաստրոֆա առաջացնել։ Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ պասսիվ ՀՈՊ միջոցներն ու ուժերը կարող են բավական չլինեն և վոր ՀՈՊ հրամասարությունը կձգտի ապահովել առաջին հերթին հարվածի յենթարկված ամենակարևվոր ոջախները (գործարանները, կամուրջները, յերկաթուղային կայարանները և այլն)։ Այդ պատճառով պաշտպանության գործում շատ մեծ նշանակություն ունի բնակչության հակադդային կարգապահությունը։ Վորը պահանջում է խստորեն, առանց առարկության և դիտակցաբեն կատարել ոդային հարձակման ժամանակ բնակչությանն իրեն պահելու հատկապես սահմանված կանոնները։ Բնակչությունն իր վարմունքով ամեն կերպ պետք է ոգնի ՀՈՊ միջոցների կատարմանը, և վոչ մի դեպքում չպետք է դժվարացնեն նրանց կատարումը։

3. Ոդային հարձակման մասին բնակչությանը նախորդ տեղեկացնելու և ՀՈՊ մասերը (խմբերը) հավաքելու նպատակով, բնակավայրի ՀՈՊ շտաբի կարգադրությամբ կտրվի «ոդային տագնապ» ազդանշանը։ Ազդանշանը տրվում է ֆաբրիկ-գործարանային և յերկաթուղային մի շարք ընդհատ շչակներով և սիրենաներով 5 բոպեյի ընթացքում, նույնպես և ռադիոյով հաղորդելու միջոցով։

«Ոդային տագնապ» ազդանշանով ձեռնարկություններում աշխատանքը չի դադարեցվում. բանվորներն ու ծառայողները դանվում են իրենց տեղերում ու շարունակում են աշխատանքը (բացի ՀՈՊ խմբերում յեղածներից)։

Այն ցեխերում, վորտեղ արտադրության բնույթի համեմատ ռումբերի դիպչելը կարող է հատուկ վտանգ առաջացնի, «Ոդային տագնապ» ազդանշանով աշխատանքը դադարեցվում է և բանվորները դուրս են բերվում անվտանգ տեղ, բայց չեն ցրվում, իսկ վտանգ ացնելուց հետո վերադարձվում են ձեռնարկությունը և շարունակում են աշխատանքը։

Բոլոր բանվորներն ու բոլոր քաղաքացիները, վորոնք դանվում են ՀՈՊ խմբերի կազմի մեջ, պարտավոր են անմիջապես ներկայանալ խմբերի հավաքակայանները։ Բանվորներն ու ծառայողները, վորոնք դանվում են ՀՈՊ խմբերի կազմի մեջ, բայց «ոդային

տագնապի» ազդանշանի մոմենտին յեղել են իրենց օբյեկտի տեղից դուրս կամ իրենց խմբի կազմակերպման ռայոնից դուրս, «ոդային տագնապի» ազդանշանով անմիջապես պետք է ներկայանան ամենամոտիկ քաղաքամասի, ռայոնային, թաղային խմբի հավաքակայանը և մտնեն ՀՈՊ համապատասխան պետի տրամադրության տակ։

Մասնակի հրդեհների քանակը կրճատելու նպատակով, «ոդային տագնապ» ազդանշանից հետո կարակտերապես արգելվում է վառել վառարանները, պրիմուսները ու տաքացնելու այլ անոթները։ Գործողության մեջ յեղած վառարանները, տապակները (պլիտաները) և այլն պետք է հանդցնել։ Մխիներությունները, հովահարության խողովակները և բաց պատուհանները պետք է ծածկել, վորպեսզի դժվարացվի թունավորված ոդի բնակարանները մբանելը։

Նկատի ունենալով, վոր ոդային հարձակման մոմենտին ջրմուղի աշխատանքը կարող է դադարի՝ ավերման կամ փչացման պատճառով, իսկ հրդեհներն ավելի հաճախակի կլինեն, քան խաղաղ պարագայում, բոլոր բնակվարձկոտները, նույնպես և մասնավոր քաղաքացիները «ոդային տագնապի» ազդանշանով պետք է ջրի պաշար պատրաստեն։ Այդ միջոցառումը թույլ կտա իրեն ապահովել նույնպես խմելու ջրով այն դեպքի համար, յեթե ջրմուղը չաշխատի, իսկ ջրամբարներից յեկող ջուրը թունավորված լինի և դրանից ոգտվելը կյանքի համար վտանգավոր լինի։ Սակայն պետք է նկատի ունենալ, վոր տերմիտի (հրձիգ) ռումբերը հանդցվում են վոչ թե ջրով, այլ միայն չոր ավազով։

«Ոդային տագնապի» ազդանշանով, բոլոր վոտով դնացողները պետք է անմիջապես թաղնվեն մոտակա տներում, տների համարների տակ սանդուղքների վրա և տների վարչության կողմից հատկապես նշանակած տեղերում։

Ավտո-տայլերի տրանսպորտը կանգնեցնում է շարժումը և տեղավորվում է մոտակա տների բակերում ու փողոցների կողքերում, փողոցի-միջին մասը թողնելով ՀՈՊ-ի տրանսպորտի ու հրդեհաշեջ մասերի շարժման համար։

Տրամվայի շարժումը «ոդային տագնապի» ազդանշանով կանգ նեցվում է, ուղեվորները տեղավորվում են մոտակա տներում, կամարների և դարպասների տակ։

Առևտրական ձեռնարկությունները (խանութները, կրպակները, պահեստները) նույնպես և բանկերը, հիմնարկները, թանգարանները, փոստ-հեռագրական բաժանմունքները և այլն «ոդային տագնապի» մոմենտից դադարեցնում են իրենց գործողությունները, չենքն ազատում են կողմնակի անձնավորություններից և փակվում են։ Միջոցներ են ձեռք առնվում պահպանելու մթերքները, կերն ու մյուս ապրանքները թունավորող նյութերից։

Շուկաները փակվում են, իսկ այնտեղ գտնվող քաղաքացիները տեղավորվում են մոտակա տնային վարչության բակերում և կամարների տակ։

Ճաշարանները ու հասարակական սննդի այլ ձեռնարկությունները «ողային տագնապի» մոմենտից դադարեցնում են հաճախորդներին ճաշեր բաց թողնելը, վորպեսզի կերակրի միջոցով թունավորում տեղի չունենա, ըստ վորում հաճախորդները ճաշարաններից չեն հեռացվում, այլ մնում են մինչև «ողային տագնապի ավարտ» ազդանշան տալը:

Կուլտուրական-կրթական հիմնարկությունները, տեսալարանային վայրերը, կինոթատրոնները և կուլտուրայի տները «ողային տագնապի» հայտարարության մոմենտից դադարեցնում են իրենց գործողությունները: Այն կինոթատրոններից, վորոնք, բացի ներկայացման դահլիճից, բավականին տեղ չունեն, հանդիսականները պետք է դուրս հանվեն: Մնացած բոլոր թատրոնների նշանամարգ մարդկանց դուրս հանելը վոչ մի դեպքում չպետք է թույլատրել, վորովհետև հաղուստի կախարանների գոյություն ունեցող կառուցվածքը դեռ խաղաղ ժամանակ, հանդիսատարածությունում իրարանցում և առաջացնում. ուստի հանդիսականներին պետք է տեղավորել թատրոնի աղատ սենյակներում: Բոլոր այն մարդիկ, վորոնք տագնապի ազդանշանի մոմենտին թատրոնումն են յեղել, պետք է առանց առարկության կատարեն թատրոնների մարչությունների և հեղափոխական կարգի պահպանության արդանների բոլոր պահանջները և վոչ մի դեպքում չպետք է խուճապի յենթարկվեն, վորովհետև միմիայն հանդատությունն ու սառնասրտությունը հնարավորություն կտան զոհերի առաջն առնել:

Ողային հարձակման մոմենտին բաղնիքների մի մասը կդադարեցնեն իրրև լվանալու կայաններ, կայուն թունավորող նյութերով վարակում ստացած քաղաքացիներին լվանալու համար: Այդ պատճառով «ողային տագնապի» ազդանշանով, բաղնիքների մարչությունները նախազգուշացնում են հաճախորդներին ոսպատնացող վտանգի մասին, հաճախորդները հագնվում են և մնում են բաղնիքներում մինչև դրա համար հատուկ կարգադրություն կամ մինչև ողային տագնապի ավարտը:

Դպրոցների ղեկավարները, «տագնապի» ազդանշանից հետո, յերեխաներին չպետք է դուրս թողնեն, այլ առաջուց պետք է նշանակեն այնպիսի սենյակներ, վոր ամենից շատ անվտանգ են քիմիական տեսակետից, և յերեխաներին տանեն այնտեղ: Ամբողջ մանկավարժական կազմը «ողային տագնապի» մոմենտից և մինչև ավարտը չպետք է հեռանան դպրոցի շենքից, այլ պարտավոր են չարունակ յերեխաների հետ լինել ու ամբողջովին պատասխանատու լինել կարգի և հնարավոր քիմիական վտանգից պահպանության կազմակերպելու համար:

«Ողային տագնապի» ազդանշանով յերեկո և գիշեր ժամանակ, բացի վերոհիշյալ կանոններից, բոլոր քաղաքացիները պարտավոր են անմիջապես հանգցնել լույսը կամ լուսամուտները ծածկեն լույսի համար անթափանց վարագույրներով: Լույսը փողոցներում, դարպասների տակ և ցուցափեղկերում անմիջապես պետք է հանգցրած լինի: Ֆաբրիկներում ու գործարաններում դրսի (բա-

կերի) լույսն անմիջապես անջատվում է, իսկ աշխատող ցեխերի լուսամուտները ծածկվում են լույսի համար անթափանց վարագույրներով: Այն ֆաբրիկ-գործարանային բակերում, վորտեղ արտադրության բնույթի համամեմատ լույսն անհրաժեշտ է, դեռ խաղաղ ժամանակ չլինում են հատուկ լուսամփոփներ (ծածկոցներ), վորոնք փակում են լույսի դեպի վեր թափանցելը:

6. Հակառակորդի ինքնաթիռներից վայր գցած առաջին ռումբերի անկումից անմիջապես հետո, պասսիվ ՀՈՊ-ի ծառայությունն սկսում է ողային հարձակման հետևանքների վերացման գործը: ՀՈՊ շտաբների և որգանների ուշադրությունն առաջին հերթին ուղղված կլինի ամենաարագ կերպով լիկվիդացիայի յենթարկել հրդեհները, կայուն թՆ-ով վարակման ոջախները հետախուզել և անվտանգ դարձնել, վնասվածներին ոգնություն հասցնել և վերականգնել այն ավերումները, վորոնք կանգնեցնում են արտադրությունը կամ դժվարեցնում են ՀՈՊ մասերի աշխատանքը:

Քիմիական ռումբերի պայթման տեղերում ՈԴԻՏ պոստերը տալիս են «քիմիական տագնապի» տեղական ազդանշան: Այդ ազդանշանը տրվում է ռելսերին, զանգերին, չուգունե տախտակներին համախակի հարվածներ տալով, առանց չշփոթելու: Այդ ազդանշանով քաղաքացիների կողմից կիրառվում են այն միջոցները, վորոնց մասին մանրամասն խոսվեց 3-րդ գրույցում: Պետք է հիշել, վոր քիմիական վարակման վտանգը համարյա թե վերանում է, յեթե ձեռք առնվեն անհատական պաշտպանության միջոցները ու ճիշտ պահպանվեն հրահանգներով նախատեսված իրեն պահելու կանոնները:

7. Հարձակման հետևանքների լիկվիդացիայի ընթացքում, այն ժամանակ, յերբ բնակավայրի շտաբը համոզվում է, վոր հակառակորդի ինքնաթիռները հեռացել են բնակավայրից, տրվում է «ողային տագնապի ավարտ» ազդանշանը, վորից հետո քաղաքի կյանքը վերականգնում է նորմալ կարգով (բացի թՆ վարակված քաղաքամասերից): «Ողային տագնապի ավարտը» տրվում է ֆաբրիկ-գործարանային յերկարաձիգ շչակներով 3 բոպեի ընթացքում, նույնպես և հաղորդվում է ռադիոյի միջոցով:

Պետք է հիշել, վոր յուրջ հարվածների դեպքում, հարձակման հետևանքների լիովին և արագ լիկվիդացիայի խնդիրը չի կարելի լուծել միմիայն ՀՈՊ որգաններ և մասերի ուժերով, այլ այդ գործը քաղաքի բոլոր աշխատավորների պարտականությունն է: Ճիշտ այնպես, ինչպես 1924 թվի հեղեղից հետո Լենինգրադի պրոլետարիատն իրեն ամբողջապես մոբիլիզացիայի յենթարկեց ավերումները վերականգնելու աշխատանքի համար, այնպես էլ հարձակումներից հետո ավերումները վերականգնելու բոլոր աշխատավորների խանդավառությունն ու պատրաստությունը,—չնայած ամեն տեսակի զրկանքների և զոհերի,—կապահովի թիկունքի անընդհատ աշխատանքը ֆրոնտի կարիքների համար, կարմիր բանակի համաշխարհային իմպերիալիզմին հաղթելու համար:

ԶՐՈՒՅՑ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ինչպես ցույց տալ առաջին բժշկական օգնություն քիմիական հարձակումից վնասվածին

Զրույցի նպատակը.

1. Աշխատել, որ հասկանան ինքնապաշտպանության և փոխադարձ օգնության միջոցների ուսումնասիրության կարևորությունն ողային հարձակումից վնասվելու ժամանակ:

2. Տալ ամենահասարակ տեղեկություններ վնասվածներին առաջին (մինչև բժշկի գալը) բժշկական օգնություն հասցնելու հիմնական միջոցների մասին:

Զրույցի պլանը.

1. Վնասվածքների տեսակները.

2. Օգնություն տրավմատիկ վնասվածքների ժամանակ:

3. Օգնություն այրվածքների ժամանակ:

4. Օգնության ընդհանուր միջոցները ԹՆ-ով վնասվելու ժամանակ:

5. Օգնության հատուկ միջոցները հեղձուցիչ, թունավոր և փոշոտացնող ԹՆ-ով վնասվելու ժամանակ:

6. Վնասվածների բացահանումը (եվակուացիան):

7. Բնակչության բժշկա-սանիտարական պատրաստության նշանակությունը ՀՈՊ-ի համար:

Կոնսպեկտ.

1. Օդաքիմիական հարձակման պայմաններում մարդու վնասվելու ժամանակ, 1-ին բժշկական օգնությունը ցույց է տրվում առաջին օգնության հատուկ բժշկական հիմնարկ-կայանների կողմից: Բայց նկատի ունենալով այն հանգամանքը, որ վնասվածին առաջին օգնության կայանը բերելը վորոշ ժամանակ է պահանջում, ցանկալի է, որ յուրաքանչյուր քաղաքացի կարողանա օգնություն ցույց տա վնասվածին մինչև բժշկի հասնելը, օգտվելով ամենահասարակ և ձեռքի տակ յեղած միջոցներով:

Պետք է տարբերել յերեք տեսակի վնասվածքներ, վորոնք կարող են տեղի ունենալ առանձին-առանձին կամ տարբեր զուգակցությամբ.

ա) վերքեր, վորոնք հասցվում են արկի կամ ռումբի պայթումով.

բ) այրվածքներ գոնապան հրձիգ բաղադրություններից, վորոնք կարող են լինել արկերում.

գ) թունավորումներ ԹՆ-ով:

2. Տրավմատիկ վնասվածքներին պատկանում են՝ ջարդվածքները, բեկումները, վերքերը, սալջարդները (ողով հարվածելուց): Յեթե այդ տեղի յե ունեցել ԹՆ-ի ներգործության հետ միաժամանակ, կամ ԹՆ-ով վարակված վայրերում, ապա ամենից առաջ վնասվածին պետք է անմիջապես զուրս բերել մաքուր

ողը կամ տանել գազապատսանը, նախապես նրան հակագազ հագցնելով և համոզվելով, վոր հիվանդը հակագազը հագած լավ է շունչ քաշում, իսկ հետո արդեն միջոցներ ձեռք առնել համապատասխան վիրաբուժական օգնություն ցույց տալու համար: Նախաբժշկական օգնությունը փողոցում պետք է ցույց տրվի վնասվելու վայրից վորքան հնարավոր է մոտիկ տեղում բժշկասանիտարական խմբերի սանիտարների կողմից, իսկ յեթե սանիտարներ չկան, այդպիսի օգնությունը պետք է ցույց տան իրենք վնասվածները (ինքնօգնություն) կամ չրջապատողները (փոխադարձ օգնություն):

3. Օդաքիմիական հարձակման պայմաններում այրվածքներ պատճառում են գլխավորապես լուսածնի (ֆոսֆորի) գոնապան ճիթացումները, վորոնք մաշկի խորը այրվածք են առաջացնում: Այրվածքի ժամանակ պետք է մաշկից հեռացնել լուսածնի մնացորդները ու լվանալ 3 տոկոս պղնձի արջասպի լուծվածքով կամ վերքը կապել մարգանատ կալիումում թրջած վիրակապով (0,4 տոկոս): Զրով չպետք է լվանալ, վորովհետև լուսածինը ջրում չի լուծվում և շարունակում է իր ներգործությունը. մաշկի վրայի բշտիկները չպետք է ծակել, վորպեսզի հետագայում թարախակալում չառաջանա:

4. ԹՆ-ով թունավորվելու դեպքում, ամենից առաջ պետք է օգնության ընդհանուր միջոցներ ձեռք առնել.

ա) վնասվածին թունավորված տեղից պետք է զուրս հանել ճաքուր ողը կամ տանել գազապատսան: Յեթե այդ հնարավոր չի արագ կատարել, ապա պետք է հակագազ հագցնել նրան (կամ ինքը հագնի) և համոզվել, վոր թունավորվածը հակագազը հագած լավ է շնչում: Վնասվածին զուրս տանելու կամ զուրս դալու ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել քամու ուղղությունը, ընտրելով շարժման ամենակարճ ճանապարհը.

բ) թունավորված տեղից վնասվածին հեռացնելուց հետո, նրա վրայից պետք է հանել հակագազն ու վերին հագուստը, վորովհետև հագուստը կարող է իր մեջ ԹՆ պարունակել. դրանից հետո հիվանդին պետք է ծածկել վերմակով, վերարկուով, չիներով, թիկնոցով և այլն, նրան տալ խմելու տաք կաթ, թեյ կամ սուրճ և, յեթե հիվանդը մրսում է, տաքացնել նրան տաք ջրով լի չիչերով կամ ջերմակալներով.

գ) աչքերը պետք է լվանալ 2 % յերկրնածխաթթու (խմելու) սոդայի լուծվածքով (մեկ թեյի գդալ 1 բաժակ յեռացրած ջրի մեջ).

դ) յեթե շնչառությունը դժվարացած է, հատկապես պռոշնեքի և յերեսի կապտավուն գունավորման ժամանակ, պետք է տալ թթվածին, ներշնչել թթվածնային բարձից.

ե) գազով թունավորվածի համար անհրաժեշտ է հանգիստ պայմաններ ստեղծել և պահպանել նրան հորիզոնական հորիզոնտալ դիրքում.

5. Հատուկ միջոցները ԹՆ-ի վորոշ խմբակների կամ առանձին ԹՆ ներգործության ժամանակ կարող են լինել.

I. Հեղձուցիչ ԹՆ: Նրանները են՝ ուժեղ, ցավոտ հաղ, շնչաք-

գելությունն, վորը ծանր պայմաններում հասնում է հեղձանքի, ցավ կրծքում, աչքերի կարմրություն, գլխացավ (գլխավորապես հակաբ), մաշկի, գույնի փոփոխում, յերբեմն սրտախառնություն, փսխում, արտաքսումների հոսանք:

Ֆոսգենով թունավորման ժամանակ, վերոհիշյալ յերևույթներն սկզբում կարող են չլինել. դրանք յերևան են գալիս վորոշ ժամանակից հետո, կամ հենց սկզբում յերևան գալով, հետո անհետանում են, վորպեսզի 3—4 ժամ անցնելուց հետո վերսկսվեն նոր ուժով: Ուստի ֆոսգենով կամ դիֆոսգենով թունավորված ին ոգնություն հասցնելու ժամանակ, նույնիսկ թունավորման թույլ յերևույթների ժամանակ, վնասվածներին չպետք է անհանգստություն պատճառել ֆիզիքական շարժումներով. նրանց անպայման պետք է պատգարակներով տեղափոխել, նույնիսկ թեթև վնասվածքների ժամանակ:

Առաջին ոգնությունը: Հեղձուցիչ նյութերով թունավորվելու ժամանակ նույնն է, ինչ վոր ցույց է տրված վերևում ընդհանուր միջոցառումների նկարագրության ժամանակ: Պետք է հիշել, վոր հիվանդին հակագազը հագած տեղափոխելու ժամանակ, հակագազը կարող է լցված լինի խորխով (թքով) կամ փսխունքով, ուստի պետք է հետևել հիվանդի շնչառությանը և, կարիք յեղած դեպքում, հակագազը փոխել: Հեղձուցիչ թն-ով թունավորման ժամանակ արհեստական շնչառություն չպետք է կատարել: Շրնչարգելության դեպքում պետք է կիրառել թթվածնի ներշնչումը յարձակից կամ բալոնից մինչև յերևսի կապտավուն գունավորման անհետանալը: Հեղձուցիչ թն-ով վնասվածին պատգարակով տեղափոխության ժամանակ, հիվանդին պետք է պառկեցնել, ըստ հնարավորին, նրա համար հանգիստ և հարմար դրությամբ, պետք է բաց անել գոտին, ոձիքը և այլն, ինչվոր կարող է խանգարել ազատ շնչառությունը, և տաք ծածկել: Հարբ հանգստացնելու համար հիվանդին պետք է տալ շնչել տաք ջրի գոլորշիներ, ավելի լավ է ավելացնել 10—15 կաթիլ սպիրտիդար, եթեր: Հիվանդին տալ խմելու 20—25 եթեր-վալերիանային կաթիլներ. գլխացավի ժամանակ— պիրամիդոն ու ֆենացետին:

II. Թունավոր թն-ը (բնածխական թթվուտ, կապտաթթու) ամենաուժեղ և ամենաարագ թույներն են մարդու համար: Այդ գազերը շատ ցնդական են, ուստի իրենց կործանիչ ներգործությունը կարող են ունենալ կարճ ժամանակամիջոցում և միայն արկի պայթման տեղի մոտերքում. այդ պատճառով անհրաժեշտ է, շնչառությունը պահելով, դուրս վազել թունավորված գոտուց: Այն մարդկանց, վորոնք շարժվել չեն կարողանում պետք է անմիջապես դուրս տանել մաքուր ոդը, սարքին հակագազ հագցնելով:

Թունավորման նշաններն են. բնածխական թթվուտով թունավորման ժամանակ նկատվում են նույն յերևույթները, ինչվոր «ածխահատով» ընկնելու ժամանակ— գլխի ծանրություն, ականջների թշշոց, ցավ քունքերում և ծոծրակում, սրտախառնություն, անգիտակ դրություն, զառչների և մաշկի գույնի փոփոխում: Կապտաթթվով թունավորման ժամանակ այդ յերևույթներն ակնհայտ են շատ ավելի արագ:

Առաջին ոգնությունը: Շնչառությունը կանգ առնելու դեպքում, պետք է անմիջապես արհեստական շնչառություն կատարել: Արհեստական շնչառության ամենահարմար յեղանակը Շեֆֆերի յեղանակն է: Այդ յեղանակը բաղկացած է հետևյալից. թունավորվածին յերեսի վրա պառկեցնում են գետնի վրա, ստամոքսը դեպի ներքև, նրա ձեռքերը նախապես պարզում են դեպի առաջ և յերեսը դարձնում են դեպի մի կողմը: Արհեստական շնչառություն կատարող անձնավորությունը շեք է անում հիվանդի վրա ծրնկները հենելով գետնին այնպես, վոր հիվանդի յեռքը նրա ծնկների արանքում լինի: Ապա պարզում է ձեռքերը դեպի առաջ, դրանց ափերը դնում է հիվանդի մեջքի և կողքերի վրա ներքևի կողերին հավասար այնպես, վոր բութ մատները դիպչեն իրար վողնաշարի ոտա: Աստիճանաբար իջնելով վնասվածի մեջքի վրա և իր ծանրությամբ սեղմելով նրան, արհեստական շնչառություն կատարողը դրանով առաջացնում է արտաշնչում: Հետո նա մի քիչ բարձրանում է և դադարեցնում է հիվանդի կուրծքը սեղմելը, առանց ձեռքերը նրանից վերցնելու: Այդ միջոցին տեղի յե ունենում ներշնչումը: Այդ գործողությունները կրկնվում են մինչև շնչառության յերևան գալը: Արհեստական շնչառության ժամանակ ոգտակար է վնասվածին թթվածին տալ ներշնչելու:

Ավելի թույլ թունավորման ժամանակ կարելի յե տալ հագքաչել անուշատրի (նաշատիրի) սպիրտ, դրանով եզ տրորել քունքերը:

Սրտի թուլության դեպքում— եթեր-վալերիանային կաթիլներ:

III. Գալարական թն (խլրիտ, լյուիզիտ): Վնասվելու նշաններն են. առաջին նշանները, սովորաբար, յերևան են գալիս 4—8 ժամից հետո, հազվադյուտ դեպքերում ավելի շատ: Վնասված տեղերում զգացվում է տաքություն, քոր, մաշկը կարմրում է և բշտիկներ են գոյանում: Խլրիտի նկատմամբ հատկապես զգայուն են մարմնի քրտնող ու ճարպոտ տեղերը (վոտների արանքը): Աչքերի վնասվելու դեպքում—աչքերի կարմրություն, աչքերը փոքրի լցնելու տպավորություն, ավելի ուշ—լուսավախ: Քթի լորձաթաղանթի վնասվելու դեպքում— քթի հեղուկ լորձի հոսանք, ցավ կրծքում, հաղ խորխով, խռպոտ ձայն:

Ոգնությունն է.

ա) հեռացնել, առանց հեղուկ թն մաշկի վրա տարածելու, բամբակով, բենզինով, սպիտակ նավթով, մարգանաթթու կալիումի լուծվածքով թրջած լաթով (լուծվածքը բալի գույնի— 0,4 %: Հեռացումը կատարել մի քանի անգամ, ամեն անգամ փոխելով բամբակը, լաթը (բամբակը, լաթը հետո այրել).

բ) թն-ը հեռացնելուց հետո պետք է լվանալ տաք ջրով և սապոնով: Լվանալու ժամանակ ուշադրություն դարձնել խլրիտի

նկատմամբ ղգայուն տեղերի վրա (կոնտուակեր, վոտների արանք և այլն)։

գ) յեթե չնայած լվանալուն, մաղերից ԹՆ-ի հոտ և գալիս, դրանց պետք է խուզել և նորից լվանալ։

դ) աչքերը լվանալ սոդայի 2 % լուծվածքով, աչքերը չկապել։

ե) քթի լորձաթաղանթի մնասվելու դեպքում, դրան լվանալ նույնպես սոդայի 2 % լուծվածքով։

Շնչառության ուղիները մնասվելու դեպքում, ներշնչել սոդայի 2 % լուծվածքի գոլորշիները։

Պալարաբանական ԹՆ-ից մնասվածի հագուստը, սպիտակեղենը, վոտանամանները կարող են թունավորման աղբյուր հանդիսանալ, ինչպես ողնություն հասցնողի, նույնպես և շրջապատողների համար, վորովհետև խարիսխ հնչտությամբ մնում և տարկանների մեջ և յերկար ժամանակ մնում է դրանց մեջ։ Ուստի խարիսի ներդործության յենթարկված բոլոր իրերը պետք է դաղահանել ընդունված յեղանակներով (սառնոտ ջրի մեջ յեռացում, մշակում քլորային կրով քլորային կաթի ձևով, սպիտակ նավթով լվանալը)։ Ողնություն հասցնողը պետք է աշխատի ռետինե ձեռնոցներով։ Խարիսով վարակվածների մասսայական լվացման համար կոդտագործվեն քաղաքային բաղնիքները ՀՈՊ-ի բժշկա-սանիտարական ծառայության հսկողության տակ։

IV. Արտասվաբեր ԹՆ-ով աչքերի մնասվելու ժամանակ, հատարերվում են հետևյալ միջոցները. արտասուքի հոսանք, աչքերի այրում, ցավ, աչքերի կարմրություն, գլխացավ։ Առաջին ողնությունն է՝ աչքերն ու մաղերը լվանալ խմելու սոդայի 2 % լուծվածքով. աչքերը կապել և չտրորել. գլխացավի դեպքում՝ պիրամիդոն ֆենացետին։

V. Փոշտացնող ԹՆ-ով (արսինիներով) մնասվելու նշանները հետևյալն են. փոշտալը, այրելու զգացում քթում և ինչափողում, ցավ կրծքում, սրտախառնություն, փսխում, յերբեմն քթից արյունահոսություն։

Առաջին ողնությունն է՝ վողողել բերանը, քիթը, աչքերն ու մաղերը լվանալ խմելու սոդայի 2 % լուծվածքով. կոկորդում ցավ առաջանալու դեպքում — կոկորդի խորը վողողում խմելու սոդայի 2 % լուծվածքով։ Կաթը տալ խմելու փոքր կումերով։

6. Բնակավայրի ՀՈՊ պայմաններում հատուկ նշանակություն ունի մնասվածների ժամանակին բացահանումը առաջին ողնության կայանը։ Առաջին հերթին ուղարկվում են (պատգարակների կամ հարմարեցրած տրանսպորտի վրա) բոլոր հիվանդները, վորոնք թունքերի քիմիական մնասվածք են ստացել. յերկրորդ հերթին—ԹՆ-ով մնասվածները և միաժամանակ վերավորվածները, յերրորդ հերթին—մնացածները։ Միայն աչքերի և մաշկի մնասվածք ստացածներին կարելի յե ուղարկել առաջին ողնության կայանը վոտով, այն հաշվով, վոր նրանք տեղ հասնեն մնասվելու մոմենտից 20—30 րոպեյից վոչ ուշ։

Բացահանման միջոցները (պատգարակներ, տրանսպորտ), կայան տիպարի ԹՆ-ով մնասվածների փոխադրության դեպքում, պետք է դաղահանման յենթարկել։ Մարդկանց— սանմշակման։

ԹՆ-ով թրջվածներին, կեղտոտվածներին և ԹՆ-ի մառախուղում յեղածներին պետք է նախադդուշական սանմշակման յենթարկել բաղնիքներին կից բժշկական-լվացման կայանում։

7. Այս թռուցիկ ակնարկից յերևում է, վոր ՀՈՊ դործում ինչպիսի մեծ դեր է խաղում բժշկա-սանիտարական ծառայությունը և ինչպիսի դժվար պայմաններում դրանց հարկ է լինում առաջին ողնություն հասցնել։

Բնակչության մեջ ինքնողնության և փոխադարձ ողնության տեղեկությունների և ունակությունների լայն տարածումը, բժշկա-սանիտարական դրագիտության բարձրացումը հնարավորություն կտան կորուստների քանակը պակասեցնել, մնասվածների ստիճանը թուլացնել, առաջին ողնության կայանների ավելորդ ծանրաբեռնուելից խուսափել և խոշոր չափով վերացնել խուճապը։

Ոչ մի մնասվելը կարող է մասսայական լինել։ Առաջին ողնությունը (ինքնողնություն և փոխադարձ ողնություն) ՀՈՊ պայմաններում խոշոր չափով բարդանում է և պահանջում է վոչ միայն տարրական դիտելիքներ, այլև մարդանք։ Առողջապահության որդանների դոյություն ունեցող միջոցները բավական չեն ՀՈՊ վերաբերմամբ բոլոր միջոցների կազմակերպության համար։ Գահանջվում է կազմակերպված բնակչության լայն ողնություն։ Այդ գործում կարելի յե մարդվել բնակվարձկոստների բժշկասանիտարական խմբերում (սան-չոկերում), բնակիներում ու դրուժիններում։

ԶՐՈՒՅՑ ՎԵՑԵՐՈՐԴ

կենդանիների պաշտպանությունը ԹՆ-ից։

Զրույցի նպատակը.

Հաղորդել տարրական տեղեկություններ կենդանիների վրա թունավորող նյութերի ներդործության ու առաջին անհետաձդելի ողնություն ցույց տալու յեղանակների մասին։

Զրույցի պլանը.

1. Կենդանիների ողաքիմիական հարձակմանը յենթակա լինելու ստիճանը։

2. Թունավորող նյութերի ներդործությունը կենդանիների վրա՝ հեղձուցիչ, արտասվաբեր, դրդռիչ ծխեր, պալարական, ընդհանուր գործողության ԹՆ։

3. Մասսայական պաշտպանության միջոցներ։

4. Անհատական պաշտպանության միջոցներ, շնչառության

գործարանների, մաշկի, աչքերի, անդամների պաշտպանություն:

5. Առաջին, անհետաձգելի ողնություն ցույց տալը՝ մաշկի կողմից, անդամների, շնչառության և տեսողության գործարանների թունավորման ժամանակ:

Անգլերեն.

1. Քաղաքներում, գյուղերում, տաններում, սովխոզներում, կոլխոզներում գտնվող տնային կենդանիները, մարդկային բնակչության հետ հավասար, յունիկա յեն հակառակորդի ոդային հարձակումներին:

Սակայն ոդային հարձակումը միշտ էլ նպատակ չի ունենալ անմիջապես վոչնչացնել կամ վարակել կենդանիներին: Այդ կարող է տեղի ունենալ կենդանիների խոշոր կուտակումների ժամանակ միայն (խոշոր անասնապահական սովխոզներ և կոլխոզներ, խոշոր շուկաներ, խոշոր նշանակություն ունեցող ապանդանոցներ, գորգական ընկալա-հանձնողական կայաններ):

Ամենից հաճախ կենդանիները կվնասվեն առանձին որյեկտներ կամ ամբողջ բնակավայրի ոմբակոծման հետ միաժամանակ:

2. Վերեւ հատուկ ԹՆ, վոր ներգործելին հատկապես կենդանիների վրա, գոյություն չունեն: Այն բոլոր ԹՆ, վոր կգործադրվեն մարդկանց թունավորման համար, կվնասեն նաև կենդանիներին: Միայն դրանցից մի քանիսը կենդանիների վրա ավելի թույլ կազդեն, քան մարդկանց վրա:

Ամենաշլխավոր ԹՆ, վորոնք ներգործում են կենդանիների վրա ամենաուժեղ կերպով, հեղուցիչ ու պալարական նյութերին: Առաջիններին պատկանում են՝ քլորը, քլորպիկրինը, ֆոսգենը և դիֆոսգենը:

Ցերկրորդներին պատկանում է, գլխավորապես, իպրիտը:

Մնացած ԹՆ (գրգռիչ, արտասվաբեր ու ընդհանուր գործողության), վորպես կենդանիների վրա հատկապես հիվանդոտ յերևույթներ չառաջացնող նյութեր, գործնական նշանակություն չունեն:

Մեր գյուղատնտեսական կենդանիների վրա ԹՆ-ի ներգործության հնարավորությունն ու անկասկածելիությունը առաջացնում են նրանց պաշտպանելու միջոցներ ու յեղանակներ գտնելու անհրաժեշտությունը:

Այդ միջոցներն ու յեղանակները կարող են և պետք է տարբեր լինեն, վորովհետև կենդանիները հակառակորդի ոդաքիմիական հարձակման մոմենտին կլինեն՝ կամ աշխատանքի մեջ, կամ իրենց մշտական մնալու տեղում (ախոռներում, բակերում, արիաջներում և այլն):

Բացի այդ, անհրաժեշտ է տարբերել այնպիսի գրություններ, յերբ կենդանիներն աշխատում են առանձին, այնպիսի գրություններից, յերբ տրանսպորտը շարժվում է փոքր ի շատե մեծ քանակությամբ սայլերով:

Միջոցներն ու յեղանակներն այդ յերկու դեպքում, միանգամայն հասկանալի նկատառումներով, տարբեր կլինեն: Ներքևում մենք կշոշափենք մասսայական ու անհատական պաշտպանության յեղանակները:

3. Բոլոր տեսակի կենդանիների մասսայական պաշտպանության հնարավորությունն այն ժամանակ, յերբ նրանք գտնվում են ախոռներում, բակերում, արիաջներում և այլն, պետք է նախատեսված լինի դեռ խաղաղ ժամանակ:

Դրա համար կենդանիների տեղավորման համար նշանակված տեղերի կառուցման ժամանակ, անհրաժեշտ է դրանց այնպես տարբել, վոր միանգամայն հնարավոր լինի պինդ փակել լուսամուտները, դռները, ոդահան խողովակները: Այդ ամենաբնական միջոցառումներից մեկն է, վորովհետև վերջին ժամանակս դիտողությունների համաձայն, այդպիսի հասարակ հերմետիկացումը շատ հուսալի կերպով յերաշխավորում է չոգեկերպ և մասնակերպ վիճակում յեղած ԹՆ-ի ներս թափանցելուց:

Միանգամայն պարզ է, վոր տանիքի կողմից լիակատար հերմետիկությունը պետք է ապահովված լինի, այսինքն տանիքը պետք է միանգամայն սարքին լինի, ճեղքեր չունենա, վորը նույնպես ~~միջոցառումներից մեկն է, վորովհետև վերջին ժամանակս դի-~~ միանգամայն հուսալի կերպով կպահպանի հեղուկ ԹՆ ներս թափանցելուց: Ավելի լավ է, իհարկե, յեթե տանիքը չինած է վոչ թե փայտից, այլ յերկաթից:

Շատ ցանկալի է, վոր մուտքի դռան առջևը կառուցված լինի նախասենյակ: Բացի այդ, չենքն անհրաժեշտ է ապահովել հակահրդեհային դուռքով:

ԹՆ ներս թափանցելուց էլ ավելի ապահովված կլինի, յեթե դռների ու լուսամուտների վրա իջեցվող վարագույրներ կառուցենք խիտ բրեզենտից կամ ծայրահեղ դեպքում մեչոկի խիտ կտորից: Նույնչափ լավ պաշտպանում են պատուհանները ու դռները փոքր, գործած գորգերով ծածկելը:

Ոդային հարձակումներ ոգտագործելու ժամանակաշրջանում գորգերը, բրեզենտները կամ գործվածքները, վոր իջեցվում են վարագույրների ձևով դռների ու պատուհանների վրա, շատ ոգտակար է թրջել: Այդ միջոցն ինքն ըստ ինքյան շատ հասարակ է, բայց բավականին հուսալի է և խոշոր չափով դժվարացնում է ԹՆ-ի ներս թափանցելը:

Կարող են լինել նաև այնպիսի դեպքեր, յերբ կենդանիներն իրենց տեղավորելու համար փակ չենքեր (ախոռներ, գոմեր, և այլն) չեն ունենալ, այլ կգտնվեն կամ բաց ծածկի տակ, կամ ծայրահեղ դեպքում բացօթյա:

Այստեղ ամենից առաջ պետք է հոգ տանել այդ կենդանիներին հակագազերով ապահովելու 100 տոկոսով: Հասկանալի է, վոր հակագազերի հարցը կարող է վերաբերվել միայն այն կենդանիներին, վորոնց համար մշակված է այս կամ այն տիպարի հակագազը (ձիեր և չներ):

Այդ կենդանիների պաշտպանության համար, պետք է նախատեսել ամուր տանիքով ծածկի սարքավորումը, ուր պետք է պատրաստել կենդանիներին ողջին տաղնապի աղդանշանով:

Ինչ վերաբերվում է խոզերին, մանր յեղջյուրավոր անասուններին և թռչուններին, ներկայումս դրանց համար հակազաղեր դոյություն չունեն, ու հարցը կարող է հանդել միայն ծածկի կամ տանիքի տակ նրանց պատսպարելուն:

Համառոտ կերպով կանդ առնենք աշխատանքի պայմաններում յեղած կենդանիների պաշտպանության հարցի վրա:

Այդպիսի կենդանիներին գլխավորապես կպատկանեն ձիերը և աշխատող անասունները: Ողջին հարձակման մոմենտին այդ կենդանիների պաշտպանության միջոցները կլինեն այն, որ շարժվող տրանսպորտը, որքան հնարավոր է արագ բացաղատել կամ, ինչպես ընդունված է արտահայտվել, ապակենտրոնացնել:

Ի հարկե, այդ ապակենտրոնացումը պետք է ընթանա կանոնավոր կարգով, առանց ավելորդ իրարանցման ու խուճապի:

Պետք է արագ դտնել այնպիսի տեղեր, ուր կարելի յե տանել սայլերը, առավելապես ընտրելով վոչ թե բաց ճանապարհները կամ հրապարակները, այլ կանաչ կամ բուսականություն ունեցողները, փոքր և կքողարկի սայլերը:

Քաղաքի փողոցներով կամ գյուղական ճանապարհներով ու խճուղիներով շարժվող առանձին սայլերը ողջին տաղնապի առանձին հենց աղդանշանով պետք է ամենից լավ ծածկված տեղ փնտրեն, որը կարողանա քողարկի թե կենդանուն և թե մարդուն:

Մատնանշել քողարկման բոլոր հնարավոր յեղանակները, թե տրանսպորտի մասսայական շարժման դեպքում և թե առանձին սայլերի համար հնարավոր չե: Այստեղ դեր կխաղա ինչպես քողարկման միջոցներ ձեռք առնող անձնավորության հասկացողությունը, այնպես ել այն տեղական հնարավորությունները, որոնք դոյություն ունեն այս կամ այն դեպքում:

Վայրի ամեն մի ծալքը, յուրաքանչյուր թուփ, յուրաքանչյուր ծառ, բնակավայրում տներից ընկած սավերը, դարպասների յուրաքանչյուր կամարը և այլն—այդ ամենը կարելի յե և պետք է ոգտագործել քողարկման ու ծածկվելու նպատակով:

Վերջապես այն կենդանիների նկատմամբ, որոնց համար դոյություն ունեն անհատական պաշտպանության միջոցներ (հակագազեր), դրանց պետք է ոգտագործել առաջին հերթին: Ողջին տաղնապի աղդանշան տալու մոմենտից պաշտպանության այդ միջոցները պատրաստվում են, իսկ քիմիական տաղնապի աղդանշան տալու մոմենտից կամ ԹՆ-ի տակդյություն ցույց տվող առաջին հենց նշանով հագցվում են:

Չի վերանում հակառակորդի ինքնաթիռների թռչելու հնարավորությունը այնպիսի տեղերի վրայով, որտեղ անասուններն իրենց մասսայով ամառ ժամանակ դանվում են արածացման տեղերում:

Տվյալ դեպքում կենդանիների պաշտպանության միակ միջոցն է՝ հոտն արագ ապակենտրոնացնել (մանր մասերի բաժանել), իսկ յեթե հնարավորություն կա, ապա նաև թաղցնել վայրի ծալքերում, անտառի բոլորքում, թփուտներում և այլն:

Կենդանիների պաշտպանության հետ միաժամանակ, անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել պաշտպանելու խոտը, ջուրը, ձիաստաքը, սայլերը և այլն, որոնք կարող են կենդանիներին վարակելու աղբյուր ծառայել: Դրանց պաշտպանությունը կատարվում է մեխանիկական կերպով (ծածկելով):

4. Վերևում մենք հիշեցինք անհատական պաշտպանության այնպիսի հուսալի միջոցի մասին, ինչպիսին է հակագազը: Սակայն հակագազը պաշտպանում է միայն շնչառության դործարանները:

Ներկայումս հակագազը դոյություն ունի միմիայն ձիերի և շների համար: Ձիական հակագազն իրենից ներկայացնում է խոտապարկի հատուկ տեսակը, որը բաղկացած է միքանի առանձին դործվածքից, և հագցվում է վերին ծնոտի վրա, որովհետև ձին չունչ է քաշում միմիայն քթով: Այդ հակագազը, յեթե անհրաժեշտ է դրան ոգտագործել, պետք է թրջել հատուկ բաղադրությամբ:

Անհրաժեշտ է լավ հիշել, որ հակագազը հագած աշխատելը թույլատրվում է միայն քայլով դնալու պայմանով, այն ել միանդամից 20 բոպեյից վոչ ավելի:

Վազքով շարժվելը կտրականապես արդելվում է:

Ձին հակագազը հագած կարող է մնալ 50 բոպեյից վոչ ավելի:

Այն դեպքերում յերբ հակագազ չկա, այն կարելի յե փոխարինել սովորական խոտապարկով: Ավելի լավ է ոգտվել 2 խոտապարկով, մեկը մյուսի մեջ դրած, իսկ դրանց արտաքուստ դնել չոր խոտի կամ ծղոտի մի փոքր շերտ: Խոտապարկերը կենդանու գլխին հագցնելուց առաջ պետք է թրջել ջրով կամ հատուկ բաղադրությամբ (հիպոսուլֆիտ-ենթածծմրիտ): Խոտապարկի յեղերի վրայով թունավորված ոդի թափանցելը սահմանափակվելու համար, խոտապարկի վերին մասն անհրաժեշտ է յերիզի միջոցով կապել ձիու գլխին քթարմատի ներքևի յերրորդ մասում:

Շների հակագազն իրենից ներկայացնում է խիտ խոտապարկի նմանություն, որը կարած է մի քանի տակ դործվածքից և հագցրվում է գլխին: Աչքերը պաշտպանելու համար հատուկ հարմարանքներ դոյություն չունեն: Այդ նպատակով կարելի յե ոգտագործել կապելու համար ամեն մի ձեռքի տակ յեղած դործվածքը կամ կապում են աչքերը վարակման մոմենտին:

Մարդկի պաշտպանության համար ճիշտ նույնպես կարելի յե այդ դործվածքներից ոգտագործել կամ ձիու սովորական ծածկոցները, կամ, յեթե դրանք չեն, ապա գլխարկները չեն, մոտեն խիտ կտոր, որով և ծածկում են կենդանուն մանդի մոմենտին:

Աչքերի և մաշկի պաշտպանության վերոհիշյալ միջոցները հուսալի չեն: Դրանց պետք է համարել սրայս պրոպոս պրոշ արգելք աչքերի և մաշկի վրա ԹՆ-ի շատ արագ թափանցելու համար:

Անդամների պաշտպանությունը կարելի է իրականացնել՝ փամների վրա հատուկ զուլպաներ հագցնելու միջոցով, որոնք պատրաստում են հատուկ բաղադրությամբ խմված կտորից:

5. Առաջին օգնության միջոցները հիմնականում հանդում են հետևյալին:

ա) Ռումբերն ընկնելուց անմիջապես հետո, յեթե կենդանու վարակման մասին կասկած կա, անհրաժեշտ է կենդանուն դուրս բերել թունավորված վայրից դեպի այն կողմը, որտեղից փչում է քամին:

բ) Վորքան հնարավոր է, արագ հանել ձիու վրայից ձիաշորը (բացի ոտաղարանից) և պոչը քաշել դեպի մի կողմն ու կապել:

գ) Աչքերն ու բերանը լվանալ սոդայի 2 % լուծվածքով, որպես այնպիսի միջոցով, որը լուծում է իպրիտ սիպարի կայուն ԹՆ:

դ) Յեթե իպրիտով թունավորում է տեղի ունեցել և մաշկի վրա կան առանձին կաթիլներ, որոնք հակադրում են կասկածել, որ այդ իպրիտի կաթիլներ են, անհրաժեշտ է դրանց զգուշությամբ վերցնել բամբակով կամ փափուկ հին լաթով: Յեթե հնարավորություն կա, շատ ուշադիր և բամբակը կամ լաթը նախապես թրջել բենզինով կամ սպիրտով նավթով: Կաթիլները վերցնելու միջոցին, պետք է խնամքով խուսափել մաշկի մեջ նրանց ներարկելուց: Անհրաժեշտ է նույնպես լավ հիշել, որ այն բամբակները, որոնցով վերցրել են իպրիտի կաթիլները, յերբեք չի կորչի դեռ ու դեն չպրտել, այլ պետք է հավաքել ու հետո այրել:

յե) Մաշկի և անդամների մշակման համար կիրառվի հետևյալ միջոցը: Այդ միջոցառումը կարելի է անցկացնել հետևյալ կերպ. մաշկին ու անդամները սպանում են կանաչ սապոնի 2 % լուծվածքով: Սապոնը թողնում են մաշկի վրա 5-10 րոպե. ընթացքում դրանից հետո լվանում են, ըստ հնարավորին տաք ջրով: Անդամների մշակումը կարելի է կատարել նույնպես թանձր սպասի նման շաղախած քլորային կրի մասնայով (1:3):

զ) Մարտական գործարանների կողմից թունավորման կասկած լինելու դեպքում, անհրաժեշտ է կենդանուն տալ խմելու սոդայի 2 % լուծվածք:

է) Ամեն մի կենդանուն, որը յենթարկվել է ԹՆ ներգործությանը կամ կասկածելի յե ԹՆ-ով թունավորման նկատմամբ, պետք է անպայմանորեն և պարտադիր կերպով ուղարկել անասնաբուժական մասնագետին ամենակարճ ժամանակամիջոցում: ԹՆ-ով վարակված կենդանուն ոչնչացնելուց ուշադիր մարդիկ պարտավոր են նախազգուշական միջոցներ ձեռք առնել վարակումից զանց պահպանելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՐԱՀԱՆԳ

Հաստատված է Մարզգործկոմի նախագահության կողմից 11/II-31 թ.

Հակառակորդի ոդային հարձակման ժամանակ բնակչության պարտականությունների մասին.

Հակառակորդի ոդային հարձակման ժամանակ խուճապ կրաստանների առաջն առնելու և հարձակման հետևանքների վերացման վերաբերյալ միջոցառումներն ամենաարագ կերպով կատարելու հնարավորության նպատակով, կատարել հետևյալը.

1. Սահմանել ընդհանուր ազդանշաններ Լենինգրադի կետերի համար

ա) «Ոդային տագնապ» ազդանշաններ և «Ոդային տագնապի ավարտ» ազդանշան: «Ոդային տագնապի» ազդանշանը տրվում է ֆաբրիկ-գործարանային և յերկաթուղային մի շարք ընդհատ գոգեշչակներով ու սիրենաներով 5 րոպեի ընթացքում և ռադիոհաղորդիչ կայանների միջոցով, մի քանի անգամ արտասանելով «Ոդային տագնապ» բառերը:

«Ոդային տագնապի ավարտ» ազդանշանը տրվում է ֆաբրիկ-գործարանային յերկարաձիգ շչակներով 3 րոպեի ընթացքում և ռադիո-հաղորդիչ կայանների միջոցով՝ «Ոդային տագնապի ավարտ» բառերով, որոնք կրկնվում են յերեք անգամ որոշ ընդմիջումներով:

բ) «Քիմիական վտանգի» ազդանշանը տրվում է այն թաղամասերում և առանձին քաղաքամասերում, որտեղ տեղի յե ունեցել թունավորող նյութերով իսկական վարակումը,—հաճախակի հարվածներ տալով ռելսերին, զանգերին և չուգունե տախտակներին, առանց շչակներ կիրառելու:

2. Բնակչության պարտականությունները

«Ոդային տագնապ» ազդանշանով բոլոր քաղաքացիները պարտավոր են.

ա) հակոդային պաշտպանության խմբերում զորակոչներն անմիջապես ներկայանան խմբերի հավաքակայանները, գոյություն ունեցող դերատեսչական հրահանգների համաձայն.

բ) վառարանները, ջրմուղները և կերակուր տաքացնելու այլ անոթներ վառելը և այլն, «տագնապի» ազդանշանից հետո կարա-

կոնապես արգելվում է։ Գործող վագոնները, պլիտաները, պրիմուսները, կերոսինները և այլն «Ողային տաղնապի» ազդանշանով պետք է անմիջապես հանգցնել։

դ) բնակվարձկոոպների, նույնպես և բնակարանների տրամադրության տակ լեղած զանազան նշանակում ունեցող տակառները, գոտարկ պահանները ու այլ ամանները պետք է անմիջապես լցնել ջրով, որը թափում են միայն ողային տաղնապի ավարտից հետո։

զ) «Ողային տաղնապ» ազդանշանով բաց պատուհաններն ամուր փակում են։

3. Փողոցային կարգապահություն (շարժման կարգը)

ա) Բոլոր վոտով գնացող մարդիկ «տաղնապի» ազդանշանից հետո անմիջապես բակերում են մոտակա տների կամարների տակ, սանդուղքների վրա և տնային վարչությունների կողմից հատկապես նշանակած տեղերում։

«Տաղնապի» ազդանշանից հետո փողոցի մի կողմից դեպի մյուսն անցնելը, փողոցում գտնվելը և փողոց դուրս գալը, բացի այն անձավորություններից, որոնք գտնվում են ՀՈՊ խմբերում, կտրականապես արգելվում է։

բ) Ավտո-սայլերի տրանսպորտը «տաղնապի» ազդանշանով կանգնեցնում է շարժումը և տեղավորվում է մոտակա տների բակերում ու փողոցների կողքերի մասերում, փողոցների միջին մասը ազատ թողնելով ՀՈՊ-ի տրանսպորտի և հրդեհաշեջ մասերի շարժման համար։ Տրանսպորտի վարիչները պարտավոր են ավտոմոբիլների և սայլերի մոտ լինել և կատարել միլիցիայի աշխատավորների և հակողային պաշտպանության պետերի կողմի բոլոր պահանջները։

գ) ՀՈՊ ապատարկման համար նշանակված տրանսպորտը «հակողային տաղնապի» ազդանշանով անմիջապես մտնում է ՀՈՊ-ի համապատասխան պետերի տրամադրության տակ։

դ) Տրամվայի շարժումը «Ողային տաղնապի» ազդանշանով կանգնեցվում է, ուղեվորները տեղավորվում են մոտակա տներում, «ա» կետի համաձայն։

ե) Փողոցային շարժումը թե վոտով և թե ձիով վերականգնում է «Ողային տաղնապի ավարտի» ազդանշանից հետո և կատարվում է միայն այն փողոցներով ու ճանապարհներով, որոնք մաքրված են թունավորող նյութերից և հատուկ փակոցներ չունեն։

4. Տնային վարչությունների պարտականությունները

«Ողային տաղնապի» ազդանշանով բնակվարձկոոպի նախագահը կամ վարչության անդամներից մեկը պարտավոր է։

ա) Անմիջապես հավաքել բնակվարձկոոպի ամբողջ ակտիվը (բնակվարձկոոպի վարչության անդամներին, վերատուղիչ, կուլտկենցաղային և այլ հանձնաժողովների ՀՈՊ-ՕՎ բջիջների անդամներին բնակվարձկոոպի վարչության սենյակում կամ դրասենյակում), որը մտնում է ՀՈՊ քաղաքամասի պետի տրամադրության տակ։

բ) Կապ է հաստատում ՀՈՊ քաղաքամասի պետի հետ հեռախոսով և ներկայացուցիչ է ուղարկում կենդանի կապ հաստատելու համար։

գ) Բնակվարձկոոպներում հրդեհներ, խուճապ և այլն առաջանալու դեպքում, անմիջապես միջոցներ է ձեռք առնում այդպիսիները վերացնելու համար և այդ մասին տեղեկություն է տալիս ՀՈՊ քաղաքամասի պետին, իսկ հրդեհաշեջներին կանչելը կատարվում է բացառապես ՀՈՊ քաղաքամասի պետի միջոցով։

դ) «Ողային տաղնապի» ամբողջ ընթացքում նշանակել պատասխանատու որապահ բնակվարձկոոպի վարչության անդամներից, որը չարունակ հեռախոսի մոտ պետի լինի և կապ պահպանի ՀՈՊ քաղաքամասի պետի հետ։

ե) «Ողային տաղնապի» ազդանշանի մոմենտից տների դրսի դռներն ու դարպասները բաց անել հետիոտն մարդկանց ու տրանսպորտներն ընդունելու և պատսպարելու համար և հատուկ տեղ նշանակի մարդկանց պատսպարելու համար։

զ) Դարպասի մոտ դնել որապահ դռնապան, պահապան կամ, եթե այդպիսիներ չկան, բնակվարձկոոպի վարչության անդամներից մեկին։

Ծանոթություն.—Վարձված տներում դարպասի մոտ պետք է լինի տան վարձակալը։

է) Դարպասների մոտի որապահների պարտականությունն է. 1) հետիոտն մարդկանց և տրանսպորտն ուղղել դրանց համար նշանակված տեղը. 2) բոլոր ազդանշաններն ու ՀՈՊ կարգադրությունները փոխանցել տնային վարչությանը. 3) իր տեղից չհեռանալ մինչև «ավարտ» ազդանշանը և կատարել պոստային միլիցիոներների և ՀՈՊ խմբերի պետերի կողմի բոլոր պահանջները։

5. Առևտրական, կուլտ-կրթական հիմնարկները, բաղնիքները, սպանդանոցներն ու կաթի փերմաները

ա) Առևտրական ձեռնարկությունները (խանութները, կիոսկները, պահեստները) «Ողային տաղնապի» մոմենտից դադարեցնում են առևտրական ոպերացիաները, հեռացնում են չենքից կողմնակի մարդկանց և փակում են, միջոցներ են ձեռք առնում թունավորող նյութերից պահպանելու մթերքները, կերը և այլ ապրանքները։

բ) Շուկաները, որպես մեծ քանակությամբ մարդկանց խնամելու տեղեր, «Ողային տաղնապի» մոմենտից փակվում են, իսկ այնտեղի քաղաքացիները տեղավորվում են մոտակա տնային վարչությունների բակերում և կամարների տակ։

գ) Ճաշարանները և ժողովրդական սնունդի այլ ձեռնարկները տաղնապի մոմենտից դադարեցնում են հաճախորդներին ճաշ բաց թողնելը, ըստ որում հաճախորդները ճաշարաններից չեն հե-

ռացվում, այլ մնում են շենքում մինչև «Ողջույն տաղնապի ավարտ» ազդանշան տալը:

դ) Կուլտ-կրթական հիմնարկները, տեսարանային վայրերը, կինո-թատրոններն ու կուլտուրայի տները, «Ողջույն տաղնապի» հայտարարման մոմենտից դադարեցնում են իրենց գործունեությունները, ըստ վորում մարդիկ շենքից դուրս չեն գալիս, այլ տեղավորվում են շենքի զանազան սենյակներում:

յե) Ամբողջ ճիշտ կազմը և խոշոր յեղջուրավոր անասունները, վոր գտնվում են ֆերմաներում, ագանդանոցներում և այլ տեղերում բացօթյա, «Ողջույն տաղնապի» ազդանշանով անմիջապես տարվում են լավ փակվող շենքերի ներսը:

զ) Հում կենդանական մթերքների (միս, կաշի և այլն) ու կերի թունաթափումն ու բռնումը տաղնապի ազդանշանով անմիջապես դադարեցվում են, իսկ մթերքներով բռնված տայլերը թաղվում են համապատասխան ձեռնարկների և հիմնարկների վարչությունների կողմից նախորոք հատկապես նշանակված տեղերում:

է) Տաղնապի մոմենտին աշխատող բաղնիքների վարչությունները նախազգուշացնում են հաճախորդներին տաղնապի մասին, իսկ վերջինները հագնվում են և մնում են բաղնիքների շենքերում մինչև «ողջույն տաղնապի» ավարտը:

6. Հիմնարկությունները, ձեռնարկությունները, թանգարանները և այլն:

ա) Տաղնապի մոմենտին աշխատող հիմնարկությունները ու ձեռնարկությունները, նույնպես և այցելության համար բաց թանգարանները ու այլ նման տեղերը «տաղնապի» ազդանշանով դադարեցնում են ռաբոտները և բոլոր պաշտոնական սենյակներից հեռացնում են կողմնակի քաղաքացիներին: Մեծ քանակությամբ հաճախորդներ ունեցող հիմնարկությունները ու ձեռնարկությունները (բանկերը, փոստը) իրենց բակերում և այլ տեղերում պետք է առաջուց նշանակեն այնպիսի տեղեր, վորտեղ պետք է տարվեն հաճախորդները «տաղնապի» ազդանշանով:

բ) Դպրոցներում գտնվող յերեխաներին չեն թողնում փողոց դուրս գալու, այլ տեղավորում են առաջուց նշանակած սենյակներում:

գ) Կառուցողական շենքերի բանվորները դադարեցնում են աշխատանքը և տեղավորվում են մոտակա բակերում:

7. Տաղնապի առանձնահատկությունները յերեկոները և գիշեր ժամանակ:

Յերեկոները և գիշեր ժամանակ «Ողջույն տաղնապի» ազդանշանով կատարվում է բոլոր վերոհիշյալ կանոնները և բացի այդ.

ա) «Ողջույն տաղնապի» ազդանշանով յերեկոները և գիշեր

ժամանակ ելեկտրական ու այլ լուսավորությունը ֆաբրիկներում, գործարաններում, հիմնարկություններում, տներում, բակերում, դարպասների տակին, բնակարաններում ու փողոցներում անմիջապես հանդցվում են կամ պատուհանները ծածկվում են լույսի համար անթափանց վարագույրներով, իսկ դրսի լապտերների վրա այնպիսի տեղերում, վորտեղ լուսավորությունն անհրաժեշտ է, պատրաստվում են հատուկ լուսամաններ, վորոնք պետք է խափանեն լույսի դեպի վեր թափանցելը:

Քաղաքում փողոցների լուսավորությունը հանդցնելը տեղի յե ունենում հատուկ հրահանգի համաձայն, ելեկտրական ցանցի և կոմունալ տնտեսության բաժնի միջոցներով:

բ) Բացի վերոհիշյալ կանոններից, բոլոր հիմնարկությունների ու ձեռնարկությունների ղեկավարները, ՀՈՊ-ի վերաբերյալ պատասխանատու անձնավորությունները և այլ աշխատավորները կատարում են համապատասխան զերատեսչական հրահանգը, վորը բացատրում է նրանց պարտականությունները «Ողջույն տաղնապի» դեպքի համար, ըստ վորում դրա մեջ սույն հրահանգը պետք է նախատեսված լինի ամբողջովին:

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՊ ՇՏԱԲ

ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐԸ

Էջ	Տող վերևից կամ ներքևից	Տպված է	Ուղղել
6	23 վ	ՃՃe	ՃՃC
7	13 վ	մք	թ.
8	3 ն	բացի իգկ	բացի ԿԻԳԿ
11	14 ն	խուսափում ենք	խոսում ենք
13	9 վ	ինքնաթիռաշինարա-բացման	ինքնաթիռաշինարա-բական
16	20 ն	դրության	գոութային
»	11 ն	200 կիլոգրամ	2000 կիլոգրամ
17	16 վ	4 մետր	40 մետր
»	20 ն	հարձակումների	հարվածումների
24	6 վ	տեսակետից	տեսակներից
»	19 ն	ՃՃC(ԲՀ)ՃՃ և ՃՃ—3	ՃՃC(ԲՀ),ՃՃ-1 և ՃՃ-3
»	17 ն	ՃՃ (ԲՀ)	ՃՃC(ԲՀ)
»	16 ն	ՀՈԳ-ի մասին	ՀՈԳ-ի մասերին
»	12 ն	ՃՃ —1 և ՃՃ —8	ՃՃ—1 և ՃՃ—3
»	4 ն	Բրամ	բրամ
25	23 վ	հանգում են	հաշնում են
»	1 ն	դրությունները	դրությունները
29	15 ն	կայանների	կայարանների
30	22 ն	կարգ պահելու	կարգ պահպանելու
33	11 վ	(պլիտանները)	(պլիտաները)
34	9 վ	հայտաբերության	հայտարարության
35	4 ն	խանդավառությունն	խանդավառությունն
37	13 ն	Թիկնոցով	Թիկնոցով
38	12 ն	բնածխակա	բնածխական
»	2 ն	ածխահատով	ածխահոտով
40	11 վ	Գալարանակոն	Գալարական
»	19 վ	աշխատի	աշխատի
41	16 ն	(սան-ջոկերում), խրամ-բակներում	(սան-ջոկերում), ՌԿՆԸ խրամակներում
43	20 վ	միջոցառումներից մեկն և, վերավերան վերջին ժամանակվա գնե-	ամբողջ տողը դուրս ձգել
44	3 վ	պատրաստել	պատուղբել
«	23 ն	առանձին	առաջին

45	22 ն	վազքով	վարդով
45	—	խոտապարկով բառն ամբողջ էջում կարդալ խարապարկ	
45	7—5 ն	Այդ նպատակով կարելի է օգտագործել կապելու համար ամեն մի ձեռքի տակ եղած գործվածքը կամ խոտապարկով կապում են աչքերը վարակման վտանգի ժամանակ։	Այդ նպատակով կարելի է օգտագործել կապելու համար ամեն մի ձեռքի տակ եղած գործվածքը կամ կրկնակի ծալած խարապարկը։ Այդ գործվածքով կամ խարապարկով կապում են աչքերը վարակման վտանգի մոմենտին։
46	20 վ	հակադրում են	հարկադրում են
»	15 ն	ապանում են	սպանում են
47	4 վ	11—II 31 թ.	11/II—31 թ.
»	16 վ	սիրեծաններով	սիրեհաններով
48	6 վ	զաՀարաններն	պահամաններն
»	13 վ	բաժանվում են	թաղնվում են
»	17 և 16 ն	«հակոդային տաղնապի»	«ոդային տաղնապի»
»	2 ն	այլ հանձնաժողովների КОЛ-ов П-ов բջիջների անդամների	այլ հանձնաժողովների Ի ОП-ов բջիջների անդամների
50	7 ն	դ) Կառուցով շենքերի	դ) Կառուցվող շենքերի
51	7 վ	լուսամուտներ	լուսամփոփներ

«Ազգային գրադարան»
NL0272867

13 203

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

Что должен знать каждый трудящийся
о противовоздушной обороне (ПВО)